Azg Ազգ

1 ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 195(4813)

ISSN: 1829-1651

Տարոն Մարգարյանը խաղաքաղաքական թեկնածու

Ալիկ Սարգսյանը հրաժարական տվեց

Կարեն Կարապետյանի հրաժարականից հետո խաղաքաղաքական պաշտոնակատար Տարոն Մարգարյանի թեկնածությունը պաշտոնապես հաստատվեց ՀՀԿ խորհրդի եւ այնուհետեւ գործադիր վարչության երեկվա նիստում, որը մինչեւ ուշ գիշեր շարունակվում էր ՀՀԿ կենտրոնական գրասենյակում: Ըստ ՀՀԿ մամլո խոսնակ Էդուարդ Շարմազանովի, Տ. Մարգարյանի թեկնածությունը առաջարկել է անձամբ ՀՀ նախագահը եւ ընդունվել է ցնծությամբ:

Երեկվա երեկոն ընդհանրապես հարուստ էր խաղաքաղաքական իրադարձություններով: Քաղաքապետի թեկնածության հարցից բացի արագորեն տարածվեց նաեւ ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի հրաժարականի լուրը, որը երկրորդվեց կիսապաշտոնական շրջանակների տեղեկատվությամբ, թե փոխոստիկանապետ Վովա Գասպարյանը փոխարինելու է նրան նույն պաշտոնում: Առայժմ հայտնի չէ ոստիկանապետի հրաժարականի պատճառը:

Զրերը փիշ-փիշ պարզվում են

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանում առաջին պահից կարող է թվալ, որ ոչ մի բան համարյա չի կատարվում, սակայն միջին նշանակության գործընթացները կամաց-կամաց ամեն ինչ ուղղորդում են դեպի նախընտրական իրավիճակ, իսկ շարժումն ու դինամիկան նույն ուղղությամբ են, եթե ուշադիր դիտենք:

ՀԱԿ-ն ահա մտավ սովորական ընտրական փուլ, ինչը նրան ամիսներ արդեն հասկացվում էր, բայց ՀԱԿ-ում համառորեն դա չէին ուզում հասկանալ, մինչեւ որ սեփական գործողություններով ուժերը փոշիացնելով՝ ինքնուրույն հանգեց դրան: Իսկ Գագիկ Ծառուկյանը, ԲՀԿ-ՀՀԿ-ի շուրջը ստեղծված աղմուկին այդպես էլ չէր պատասխանում՝ կարծես ինչ-որ բանի սպասելով. ինչի՞ էր սպասում՝ դժվար է ասել, բայց հենց ՀԱԿ-ի հանրահավաքից եւ ՀՀԿ-ի նոր հավաստիացումներից (թե՝ ԲՀԿ-ն մեր գործընկերն է) հետո հաջորդեց Ծառուկյանի երեկվա պարզաբանումը:

Գ. Ծառուկյանն առաջ հերթական քառօրյայի սկզբում էր միշտ լրագրողների հետ ճեպազրույցում իր ասելիքը փոխանցում, սակայն հիմա, երեւում է, նրա տառապանքը փորձ ունի, սկսել է կայքով պատասխանել, որ ավելորդ ոչ մի հարցի չպատասխանի, թե չէ մամուլը սիրում է նրա ասածների առումով ճանճից փիղ ստեղծել: Այսպիսով՝ Գ. Ծառուկյանն իր հարցազրույցում փորձել է եզրափակել ՀՀԿ-ԲՀԿ հակադրության՝ վերջին շրջանում օր-օրի զարգացվող պատմությունը:

Տես էջ 3

Վրաստանի ԱԳՆ-ն մարգարում է

Վրաստանի արտգործնախարարությունը հերքել է լուրերը, թե Հայաստանի նախագահը «նեղացել է» Վրաստանի նախագահից եւ այդ իսկ պատճառով հետաձգել այցը Վրաստան: Վրացական լրատվամիջոցների տեղեկացմամբ՝ այս մասին հերթական ճեպազրույցում հայտնել է Վրաստանի ԱԳ փոխնախարար Նինո Քալանթաձե՝ հանդես գալով Հայաստանի նախագահի մամլո խոսնակի «դերում»:

Նրա ներկայացմամբ՝ Հայաստանի նախագահի այցը չի հետաձգվել, այլ հայտնի չի եղել վերջնական ժամկետը, ինչն էլ ներկա փուլում, ըստ Քալանթաձեի, ճշտվում է: Հատկանշական է, որ ներկայացնելով Հայաստանի նախագահի «նեղանալու» պատճառը՝ վրացական լրատվամիջոցները Վրաստանի նախագահի՝ հայկական փրկարարների դանդաղ գործելու ֆոնին վրացիների «արագաշարժության» մասին դատողությունը ներկայացրել են «իբր» հավելմամբ:

Նկատենք, որ տիկին Քալանթաձեն նախ պետք է ներողություն խնդրեր, քանի որ ինքն էլ հենց հանդիսացել է այն սխալ աղբյուրը, ըստ որի Հայաստանի նախագահը պետք է նոյեմբերի սկզբին այցելեր Վրաստան: Բացի դրանից, «Ազգի» տեղեկություններով, ժամանակին Հայաստանի նախագահի այցի մասին հայտարարող Քալանթաձեն շատ է շտապել, քանի որ անգամ այդ ժամանակ այցելության ժամկետները համաձայնեցված չեն եղել, թեեւ հստակ է, որ Վրաստանի նախագահ Սաակաշվիլու պոռոտախոսությունը անպատժելի չպետք է մնա: Ա. Հ.

ԷԴՎԱՐԴ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Զուղայի խաչքարերի մասին հիշեցում ՅՈՒՆԵՍԿՕ-ում՝ դատապարտելու կոչով

«Ադրբեջանի ղեկավարության հրահանգով եւ ամենատես աչքի հսկողության ներքո մի քանի տարվա ընթացքում ոչնչացվեցին Նախիջեւանի միջնադարյան գերեզմանատան հազարավոր նմանատիպ խաչքարեր՝ այն վերածելով ռազմական հրաձգարանի: Միջնադարյան հայ վարպետների կողմից նրբորեն փորագրված խաչքարերի ոչնչացումը այլ ժողովուրդների մշակույթի նկատմամբ կույր ատելության արտահայտություն է», հայտարարել է Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը** հոկտեմբերի 29-ին Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնից՝ կազմակերպության 36-րդ գլխավոր կոնֆերանսում:

Նալբանդյանը հիշեցրել է, որ նախորդ տարի «Հայկական խաչքարային արվեստը» ներառվել էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում: Նալբանդյանն ընդգծել է, որ այդ վանդալիզմի առնչությամբ Հուշարձանների պահպանության 16-րդ միջազգային խորհրդի (ICOMOS) Գլխավոր ասամբլեայի բանաձեւում նշվում է, որ դժբախտաբար «**այս ժառանգությունը, որը մի ժամանակ իր արժանի տեղն էր զբաղեցնում համաշխարհային գանձերի ժառանգության մեջ, այսօր այլեւս չի կարող փոխանցվել ապագա սերունդներին**»:

Միեւնույն ժամանակ, ըստ Հայաստանի ԱԳ նախարարի, Հայաստանի հարեւանները տարբեր մոտեցումներ են ցուցաբերում հայկական պատմական ժառանգության պահպանության հարցում: «Առկա է լավ համագործակցություն Իրանի հետ, որը պատշաճ հոգատարություն է դրսեւորում իր տարածքում տեղակայված հայկական հուշարձանների նկատմամբ... Խոսնումնալից համագործակցություն է սկսվել նաեւ հարեւան Վրաստանի հետ: Ցավոք, այդ դրական փորձը փոխադարձություն չի գտնում մեր մյուս հարեւանների մեջ: Հայկական պատմական ժառանգության ոչնչացման քաղաքականության հետեւանքով համաշխարհային արժեք ներկայացնող հազարավոր հուշարձաններ իսպառ անհետացել են», փաստել է Նալբանդյանը:

Հիշատակելով Հայաստան-ՅՈՒՆԵՍԿՕ համագործակցության տարբեր ոլորտները՝ Նալբանդյանը շեշտել է, այդուհանդերձ, որ երբ մարդու իրավունքների պաշտպանությունը եւ խթանումը համարվում են հիմնարար սկզբունք, մշակութային կամ կրոնական արժեքների հետեւողական, պարբերական եւ միտումնավոր վնասումը կամ ոչնչացումը պետք է խստորեն դատապարտվեն՝ անցյալի սխալների կրկնությունը կանխելու համար: Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լարվածություն հայկական Բուրջ Համուդի մատույցներում

Վերջին օրերին լարվածություն է նկատվում Լիբանանի մայրաքաղաքին կից հայաբնակ Բուրջ Համուդ խաղաք-թաղամասին հարող մասնավորաբար Նաբաա եւ Դուրա շրջաններում, որտեղ անհամեմատ շատացել են քրդերն ու թյուրքմենները: Նրանց մեծ մասը Լիբանան է մտել հարեւան Սիրիայից, որտեղ շատ քրդեր մասնակցություն են ունենում հակաիշխանական խռովություններին: Բուրջ Համուդի մատույցներում գտնվող վերոհիշյալ շրջաններում, հատկապես հայկական Արագած եւ Նոր Ամանոս թաղերում, վերջին ժամանակներին ավելացել են քրդերի եւ թյուրքմենների ոտնձգությունները հայերի ու հայապատկան ինչքերի նկատմամբ, լկտի պահվածքի դրսեւորումները՝ տեղի հայ ընտանիքների դեմ: Վերջին ուրբաթ եւ շաբաթ օրերին տեղի են ունեցել փողոցային բախումներ, դանկահարվել են մի քանի հայ երիտասարդներ: Չի ուշացել ուժգին հակահարվածը, որից հետո հնչել է Բուրջ Համուդում տիրապետող ՀՅԴաշնակցության ներկայացուցիչների պահանջը քրդերից՝ հեռանալ հայաբնակ թաղերից:

Տեղեկացնենք, որ քրդերը Լիբանանում մինչեւ վերջին ժամանակները քաղաքական ներկայություն, հետեւաբար ազդեցություն չունեին: Միայն վերջին իրաքյան պատերազմից հետո նրանք ողջ տարածաշրջանում կարեւոր քաղաքական դարձել, ինչը, հավանաբար, նրանց լկտի պահվածքին թեւեր է տվել Լիբանանում:

Այնուամենայնիվ, տեղի հայությունը պետք է զգույշ լինի, որպեսզի արհեստականորեն միջէթնիկական հարթակ չտեղափոխվի լարվածությունը, որը կարող է շահարկվել 3-րդ ուժերի կողմից:

Մոսկվան պատրաստ է Եվրոմիությանը հատկացնել 10 մլրդ եվրո

Ռուսաստանը պատրաստ է ԱՄՀ-ի միջոցով Եվրոմիությանն աջակցել 10 մլրդ եվրո գումարով: Այդ մասին երեկ լրագրողներին հայտնել է ՌԴ նախագահի օգնական Արկադի Դվորկովիչը:

Պատասխանելով ֆինանսական օժանդակությանը վերաբերող հարցին, նա ասել է. «Եվրոմիությունից պաշտոնապես դեռ որեւէ խնդրանք չենք ստացել»: Նրա խոսքերով՝ եթե նման խնդրանք ստացվի, ապա «ՌԴ իրավասու մարմինները՝ ֆինանսների նախարարությունը, Կենտրոնական բանկը, կառավարությունը, նախագահի հավանությամբ լրջորեն կքննարկեն այդ հարցը»:

Բայց այդ դեպքում Ռուսաստանը փաստորեն ստիպված կլինի ստեղծել հատկացվող միջոցների ծախսումը վերահսկող նոր մեխանիզմ, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Հենց այդ բարդության պատճառով Մոսկվան առայժմ նախընտրում է Եվրոմիությանը ԱՄՀ-ի միջոցով օգնելու տարբերակը:

Զազա ժողովրդին նվիրված միջազգային գիտաժողովը եզրափակվեց

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՓՅԱՆ

Երեւանի «Կոնգրես» հյուրանոցի դահլիճում 3 օր շարունակ իրենց բազմալեզու գիտական ու պատմական աշխատություններով ելույթ էին ունենում Թուրքիայից եւ Արեւմտյան Հայաստանից, Իրանից, Գերմանիայից, Իտալիայից, Ավստրիայից, Ավստրալիայից, Կանադայից, ԱՄՆ-ից, Հայաստանից եւ այլ երկրներից մասնակից ականավոր ակադեմիկոսներ, գիտաշխատողներ, զազա ժողովրդի մշակույթին, լեզվին եւ ինքնությանը նվիրված գրքերի հեղինակներ, դասախոսներ: Ակադեմիական մակարդակով նախապատրաստված այս գիտաժողովի 2-րդ ու 3-րդ օրերը հագեցած էին բարձր գնահատանքի արժանի ներկայացումներով եւ ազատ քննարկմամբ:

«Հալիվորի վանք, Հայկական վանք եւ Զազա սրբատեղի» կարեւոր աշխատությամբ (Վիկտորիա Առաքելովա եւ Քրիստինե Գրիգորյան-Հայաստան) մասնակիցները ծանոթացան նաեւ հայկական Դերսիմի պատմական անցյալի կարեւոր հայ-զազա սրբատեղիներից մեկին, որը գոյատեւում է մինչեւ այսօր, թեկուզ կիսաավերակ վիճակում:

Հատկանշական էր Դերսիմում եւ Թուրքիայում գիտական հետազոտումներ կատարած գերմանացի երիտասարդ հետազոտող **Աննիկա Թյորնեի** ելույթը՝ նվիրված բռնության ու հալածանքի տարիներին, եւ Դերսիմի Ալեւի Դեղեներին (Սրբակյաց ճգնավորներ): Նա թվարկեց 1915-ի ցեղասպանությունից հետո վերապրած հայերի փրկումը զազա-ալեւիների մեջ, ինչպես նաեւ հայկական հինավուրց բնակավայրերի տեղանունների ու սովորույթների, ավանդույթների պահպանումը Դերսիմում մինչեւ այսօր: Աննիկա Թյորնեն թվեց նաեւ 19-րդ դարի կեսերին Դերսիմում հայ քրիստոնյաների եւ... հեթանոսների միջեւ տեղի ունեցած բախումների մասին, մի երկրամաս, ուր մինչեւ այսօր զարգացականությունը, արեւապաշտությունը եւ հեթանոսությունը ունեն հայ զազա, զզլբաշ հետեւորդներ: Ալեւի-Զազա կրոնում իսլամական տարրերի մասին հետաքրքրական տեղեկություններ փոխանցեց **Կարիկ Գրիգորյանը**, ապա մասնակիցները այցելեցին Երեւանի պատմության թանգարան՝ ծանոթանալով քարեղարյան եւ բրոնզեդարյան Հայաստանի, Արշաքեսյան հարստության հնագույն գանձերին:

Տես էջ 2

Սոտենում ենք գնաճի նպատակային միջակայքի՞ն

Հոկտեմբերին գնաճը կազմեց 5,7 տոկոս

2011-ի հոկտեմբերին 2010-ի հոկտեմբերի նկատմամբ գնաճը կազմել է 5,7 տոկոս: Այս ցուցանիշն է հրապարակել ազգային վիճակագրական ծառայությունը՝ ներկայացնելով սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2011-ի հունվար-հոկտեմբերին: Ընդ որում, այս տարվա առաջին 10 ամիսների գնաճը նախորդ տարվա 10 ամիսների նկատմամբ կազմել է 8,3 տոկոս: Իսկ նախորդ ամսվա՝ սեպտեմբերի նկատմամբ գներն աճել են 0,5 տոկոսով:

Հիշեցնենք, որ գների ինդեքսը ազգային վիճակագրական ծառայությունը որոշում է հիմք ընդունելով շուրջ 500 ապրանքների եւ ծառայությունների գների դինամիկան:

Ըստ վիճակագրության, հոկտեմբերին նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ պարենային ապրանքների գներն աճել են 9,3 տոկոսով, ոչ պարենային ապրանքների գները՝ 3,9 տոկոսով, ծառայություններինը՝ 2 տոկոսով: Ինչ վերաբերում է հոկտեմբերին այս տարվա սեպտեմբերի համեմատ գնաճի ցուցանիշին, ապա պարենային ապրանքների գներն աճել են 0,3 տոկոսով, ոչ պարենային ապրանքների գները՝ 0,9 տոկոսով, ծառայություններինը՝ 0,1 տոկոսով:

Պարենային ապրանքների գնաճի վրա հոկտեմբերին սեպտեմբերի նկատմամբ մեծապես ազդել են մսամթերքի, կաթնամթերքի, շաքարավազի, ձվի եւ հրուշակեղենի՝ 0,4-4,6 տոկոս գնաճը: Ամենամեծ գնաճն այս ապրանքներից ունեցել է հրուշակեղենը՝ 4,6 տոկոս, ինչը, վիճաբառության պարզաբանմամբ, մեծապես պայմանավորված է կարամելի 9,9 տոկոս գնաճով:

Բանջարեղենի եւ կարտոֆիլի գներն, ընդհանուր առմամբ, այս տարվա հոկտեմբերին նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ նվազել են 2,5 տոկոսով, իսկ այս տարվա սեպտեմբերի համեմատ՝ 0,4 տոկոսով:

Մրգերի գներն 2010-ի հոկտեմբերի համեմատ 2011-ի հոկտեմբերին նվազել են 1,1 տոկոսով, այս տարվա սեպտեմբերին համեմատ՝ 1,4 տոկոսով: Հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գնանկումը հիմնականում պայմանավորված է եղել արքայանարինջի՝ 33,7 տոկոս, նռան՝ 29,5 տոկոս, տանձի՝ 11,3 տոկոս, խաղողի՝ 8 տոկոս, խնձորի եւ ձմերուկի՝ 5,3 տոկոս, կիտրոնի՝ 2,4 տոկոս գնանկմամբ: Դրան զուգահեռ, սալորի գնաճը կազմել է 2,7 տոկոս, դեղձի՝ 4,6 տոկոս, սեխի՝ 5,7 տոկոս:

Ոչ պարենային ապրանքների գների 0,9 տոկոս աճը հոկտեմբերին սեպտեմբերի նկատմամբ հիմնականում պայմանավորված է եղել ոսկերչական իրերի 1,8 տոկոս, վառելիքի՝ 2 տոկոս, հագուստի եւ գործվածքի 3,6 տոկոս գնաճով:

Ծառայությունների ոլորտում հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ սակագների 0,1 տոկոս գնաճը մեծապես պայմանավորված է իրավական եւ բանկային ծառայությունների սակագների 17,4 տոկոս աճով:

Փաստորեն, տարեվերջից երկու ամիս առաջ գնաճի ցուցանիշը ընդհուպ մոտեցել է Կենտրոնական բանկի սահմանած գնաճի 4 տոկոս +/- 1,5 տոկոս նպատակային միջակայքի վերին սահմանին: Սակայն, ինչպես նշել էինք սեպտեմբեր ամսվա ցուցանիշները ներկայացնելիս, հարկ է նկատի ունենալ, որ տարեվերջին, տնական առեւտրի աշխուժացմանը զուգընթաց, գնաճային երեւույթները սովորաբար ուժեղանում են:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տարոն Մարգարյան. «Աբովյան փողոցի բոլոր կրպակները պետք է ապամոնտաժվեն»

Աշխատանքային խորհրդակցության ժամանակ Երեւանի քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար Տարոն Մարգարյանին պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության պատասխանատուն զեկուցել է, որ մայրաքաղաքի շուկաներում եւ սնորգեստնյա անցումներում կատարված սուգայցերով արձանագրվել են մի շարք թերացումներ: Պարտավորությունները խախտող տնտեսվարողների հանդեպ կիրառվել են վարչական տույժեր: Քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատարը հանձարարել է համատեղ աշխատանքային խումբ ստեղծել, որպեսզի նոյեմբերին սուգումներ իրականացվեն շուկաներում:

Խորհրդակցության ժամանակ քաղաքապետարանի հանրակրթության վարչության պետը զեկուցել է, որ նախադպրոցական եւ դպրոցական հաստատություններում ջեռուցման համակարգերի խնդիրը հիմնականում լուծվել է: Այժմ աշխատանքներ են ընթանում, որպեսզի մինչեւ ձմեռ մայրաքաղաքի 12 մանկապարտեզներ ապահովվեն ջեռուցմամբ: Տարոն Մարգարյանը շեշտել է, որ մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում առկա ինքնակամ, պօրինի, ինչպես նաեւ հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի պայմանագրի ժամկետները լրացած կրպակների ապամոնտաժումը շարունակվելու է: «Շարունակելու ենք բանակցությունները սեփականատերերի հետ եւ ներկայացնելու ենք հարցի լուծման ընդունելի առաջարկներ: Աբովյան փողոցի բոլոր կրպակները պետք է ապամոնտաժենք», ասել է Մարգարյանը:

Հ. Հ.

Զազա ժողովրդին նվիրված միջազգային գիտաժողովը եզրափակվեց

1-ին էջից

Հոկտեմբերի 29-ի հեսմիջօրեի ելույթները նվիրված էին զազաների լեզվին ու ֆերականությանը, ֆրդերենի եւ հարեւան լեզուների բաղդատականով (Ջոնի Ջուենկ-Հոլանդիա եւ Վարդան Ոսկանյան-Հայաստան) հիշատակության արժանի էր մասնավորապես Մեսուդ Քեսկինի (Գերմանիա) ներկայացումը, հաճախ հայերեն լեզվով... «Նշումներ զազա-հայ լեզվային կապերի», ուր հատկորեն թվագրվում էր հայերեն բառերի եւ ածականների հսկայական մի ցանկ, հաճախ պահպանված հնադարյան արտասանություններով զազա լեզվում:

Իտալացի ականավոր գիտնական Ադրիանո Ռոսսին (իրանական հնագույն շրջանի ուսումնասիրությունների մասնագետ), «Գունդ»-ի մասին իր կարեւոր պարզաբանումներով, համշենագետ եւ զազա լեզվի վաստակաշատ գիտնական Ուվե Բլեսինկը (Հոլանդիա), Մեհմեդ Ալի Դեմիրտաշը (Թուրքիա) անդրադարձան զազա լեզվին եւ նրան սպառնացող վտանգներին:

Գիտական, լեզվաբանական ու պատմական-վերլուծական

փաստարկներով լի ելույթներ էին գիտաժողովի 3-րդ օրվա ներկայացումները: Նազմի Ջիչեկը (Թուրքիա), Արտաշիր Զուլֆիկարին (Իրան), Բիլալ Ջիլանը (Թուրքիա), Ադնան Օկտայը (Թուրքիա), Նեւզեթ Անուկը (Թուրքիա) խոսեցին ֆրդերենի, հին ու նոր պարսկերենի, թուրքերենի փոխադարձ ազդեցությունների մասին զազա լեզվի, ֆերականության ու շահյուսության վրա: Տեղի ունեցան բուռն քննարկումներ, որոնք կարգավորվեցին դոկտ., պրոֆ. Գառնիկ Ասադրյանի եւ նիստերը նախագահող մյուս գիտնականների կողմից: Քրդերենով, զազակի լեզվով, անգլերենով ու թուրքերենով ելույթները շարունակվեցին մինչեւ գիտաժողովի ավարտը՝ Լորեն Դեմիրելի (Թուրքիա), Ահմեդ Կիրկանի (Թուրքիա) եզրափակիչ ներկայացումներով:

Գիտաժողովի պատշաճական ավարտից հետո, մասնակիցները այցելեցին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարան, ուր Ոսկան արքեպիսկոպոս Գալբակյանը բարի գալուստ մաղթելով այս բազմազգ եւ բազմակրոն պատվիրակությանը, ներկայացրեց հայ ժողովրդի սրբազան եկեղեցական հաստատության հակիրճ պատմությունը: Այցելուները շրջեցին թանգարանում, առանձնապես հետաքրքրվելով նաեւ զրադաշական-հեթանոսական մեհյանով,, ծանոթացան ցուցադրված հնագույն քրիստոնեական գանձերով:

Երեկոյան գիտաժողովի մասնակիցներն ու կազմակերպիչները հյուրընկալվեցին այս պատմական կարեւոր իրադարձությունը ֆինանսավորող Հրաչ Գաբրիելյանի հյուրանոցի դահլիճում, ուր տեղի ունեցավ հրաժեշտի փառավոր ճաշկերույթ: Հայկական եւ զազա երաժշտությամբ բոլորին հիացրին Զեմիլ Կոչկիրին եւ Շիրակ Շահրիկյանը, իսկ գիտաշխատող Մեսուդ Կեսկինը հայերենով ու զազա լեզվով բոլորին ուրախացրեց իր՝ Դերսիմի հնագույն երգերով:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՆ

Մխիթար Գոշի մեդալ՝ Սերգեյ Կապինոսին

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երեւանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսին Հայաստանում առաքելությունն ավարտելու կապակցությամբ: Սերգեյ Կապինոսին Հայաստանի նախագահը պարգեւատրել է Մխիթար Գոշի մեդալով՝ Հայաստանում ԵԱՀԿ սկզբունքների եւ արժեքների տարածման եւ ամրապնդման գործում ունեցած ակտիվ մասնակցության համար:

Ըստ պաշտոնական հաղորդագրության, Սերժ Սարգսյանը կարեւորել է ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի՝ տարբեր ոլորտներում Հայաստանում իրականացրած ծրագրերը, որոնք, նրա խոսքով, էական աջակցություն են Հայաստանի կառավարության ծրագրերին եւ նպաստում են երկրում բարեփոխումների ընթացքին:

Սերգեյ Կապինոսն, իր հերթին, շնորհակալություն է հայտնել նախագահին՝ Հայաստանում իր գործունեության ընթացքում ցուցաբերած աջակցության եւ պետական կառավարման համակարգի, բնապահպանության, կրթության, ոստիկանության, պաշտպանության ու մի շարք այլ ոլորտներում ծրագրերի իրականացման եւ բարեփոխումների առաջմղման գործում քաղաքական կամքի դրսեւորման համար:

Ա. Հ.

Արեւմտահայ պոեզիան՝ ասմունքի փառատոնի թեմա

Ինչպես տեղեկացրել ենք, Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո արդեն չորրորդ անգամ անցկացվում է «Հանրապետական մանկապատանեկան ասմունքի փառատոն»: ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ անցկացվող փառատոնն այս անգամ նվիրված է արեւմտահայ անվանի գրողներ Պետրոս Դուրյանի, Վահան Թեքեյանի, Ռուբեն Սեւակի եւ Միսաք Մեծարենցի հոբելյաններին:

Սեպտեմբերի 15-ից հանրապետության բոլոր մարզերում, Արցախում եւ Ջավախքում մեկնարկել է փառատոն-մրցույթի առաջին փուլը: Երկրորդ մարզային փուլի մեկնարկը հանդիսավորությամբ ազդարարվեց արվեստների պայրաքաղաք Գյումրու թիվ 19 միջնակարգ դպրոցում: Փառատոնի ժյուրիին, որի կազմում ընդգրկված են հանրապետությունում ճանաչված գրողներ, բանաստեղծներ, արվեստագետներ, դերասաններ, երգիչներ, ուսուցիչներ, մարզի անունից ողջունեց եւ նման փառատոներ անցկացնելը կարեւորեց Շիրակի մարզպետի խորհրդական **Հասմիկ Կիրակոսյանը**:

Արեւմտահայ պոեզիան ներկայացրեց օրվա բանախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն **Կարո Վարդանյանը**: Իսկ ՀՀ վաստակավոր արտիստ **Սարգիս Նաջարյանը** ներկաներին հիացրեց իր հրաշալի ասմունքով, հատկապես արեւմտահայ պոեզիայի նմուշներ ընթերցելով: Նշենք, որ Շիրակի մարզի 167 դպրոցների 3240 աշակերտներից, որոնք մասնակցել էին փառատոն-մրցույթի առաջին փուլին, 35-ը իրավունք էր ստացել մասնակցելու մարզային եզրափակիչ փուլին:

Ժյուրիի վերջնական գնահատականների ամփոփումից հետո հայտնի դարձան երկու տարիքային խմբերում՝ 11-14 եւ 15-17 հաղթողները (թվով 8 մասնակից), որոնք իրավունք ստացան մասնակցելու 3-րդ եզրափակիչ փուլին: Մարզի հաղթողներին շնորհավորեցին եւ հայ պոեզիայի մասին խոսք ասացին բանաստեղծներ **Ռազմիկ Դավոյանը** եւ **Կորյուն Առաքելյանը**: Ուրախալի էր, որ Շիրակի մարզի հայ գրականության ուսուցիչները ճիշտ էին կարողացել մատուցել արեւմտահայ պոեզիան իրենց սաներին, որի արդյունքը պարզապես հիացրեց ժյուրիին: Նոյեմբերի 4-ին փառատոնի ժյուրին կհյուրընկալվի Արարատի մարզում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Գյումրի

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

ՀՅԴ-ն չի ցանկանում «ենթարկվել»

Մեկնաբանելով վարչապետ Տիգրան Սարգսյանի «ՀՀԿ-ի հետ չհամագործակցողները կհայտնվեն կոտրած տաշտակի առաջ» արտահայտությունը, ՀՅԴ խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանը** «համագործակցություն» բառը ընկալել է «ենթարկվել»: Դաշնակցական գործչի գնահատմամբ՝ «համագործակցություն» նշանակում է հաշվի առնել դիմացինի մոտեցումները, հանուն ազգային շահի երբեմն գնալ զիջումների, սակայն ունենալ սեփական կարծիք:

«Սակայն ՀՀԿ-ն համագործակցություն ասելով նկատի ունի լինել հլու-հնազանդ: Նրանց համար ընդդիմադիրները, սխալը մատնանշողները դիտվում են թշնամիներ: Վարչապետի ասած համագործակցությունը նշանակում է ենթարկվել, թող դա իրենց կոալիցիայի մեջ կիրառեն, թե որևանով դա կհաջողի, կտեսնենք ապագայում: Դա մեզ համար ընդունելի չէ: Իրենք ու իրենց տաշտակը: Մենք թույլ չենք տա, որ իշխանությունը հեզասահ իշխի եւ թույլ տա սխալ սխալի հետեւից»:

Հովհաննիսյանը շեշտում է, որ կոալիցիան այլ ուժերի հետ չի համագործակցում եւ երբեք չի ընդունում իր սխալները:

«Եթե մենք համագործակցեինք, ապա Ադրբեջանը չէր դառնա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ, չէին լինի հայ-թուրքական արձանագրությունները, կասասրոֆիկ սխալներ թույլ չէին տա երկրի ներսում:

Եթե լսեին մեր խորհուրդները, ապա Հայաստանը ՄԱԿ-ի Անվտանգության ժամանակավոր անդամ դառնալու թեկնածությունն ակտիվ կպաշտպաներ: Եթե լիներ նաեւ Հայաստանը, ապա երկու կողմերից էլ որոշակի ձայներ կգնային Հայաստանին, եւ այդ դեպքում կբախվեինք ամերիկյան եւ եվրոպական մտածելակերպին: Նրանք կասեին՝ երկու պետություններն իրենց մեջ տարածքային խնդիրներ ունեն լուծելու, հետեւաբար նախապատվությունը տալիս ենք նրանցից ոչ մեկին: Սլովենիան կհաղթեր, եւ Հայաստանը կխոչընդոտեր Ադրբեջանին»:

Նա հավելում է, որ Ադրբեջանի՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ժամանակավոր անդամ դառնալու դառը պուղները կհաղթենք մոտ ապագայում:

Հովհաննիսյանի գնահատմամբ՝ մեր դիվանագիտությունը պետք է դուրս գա «պարալիչի» վիճակից, որպեսզի կարողանա դիմակայել Բաքվին: Դաշնակցական գործիչը չի կասկածում, որ երկու տարի Բաքուն ՄԱԿ-ում Դարաբաղի հարց է քննարկելու եւ տարաբնույթ փաստաթղթեր առաջ քաշելու: «Կկարողանա՞ Երեւանը հակադարձել» հարցին Հովհաննիսյանը դժվարանում է պատասխանել: Անդրադառնալով վերջերս կառավարության առաջարկած հարկային նոր փաթեթին՝ Հովհաննիսյանն առաջարկում է վարչապետին՝ դեստրուկտիվ մոտենալ իր առաջարկած տնտեսական գործունեությանը: «Հարկային նոր փաթեթ է բերում: Ինչո՞ւ են ՊԵԿ-ին պարտադրում, որ այդքան կոշտ ճնշման տակ դնի մարդ եւ միջին բիզնեսը: Կաֆեներին հսկողության տակ պահել, թե ինչ հաստությամբ պետք է կալբասը կտրեն՝ ճիշտ չէ: Պետք է հաստատված գումար լինի, որ վճարեն: Կառավարությունը հասկանում է, որ երկրում կան անձեռնմխելի տնտեսական սուբյեկտներ, դրա համար էլ հարկայինի բեռն ընկնում է միջին բիզնեսի վրա»:

Անդրադառնալով հերթական խորհրդարանական ընտրություններին՝ Հովհաննիսյանն ասաց, որ պետք է հասարակական ակտիվություն լինի, որպեսզի խորհրդարանում ընդդիմադիր ուժերն ավելի շատ լինեն եւ իմպիչմենտ հայտարարեն Սերժ Սարգսյանին: «Նախագահական համակարգը Հայաստանի համար թունավոր է: Պետության օրգանիզմը թունավորված է նախագահական համակարգից», ասաց դաշնակցական գործիչը:

Հ. Հ.

Նոր անձնագրով մարդիկ դուրս կանեն, նույնականացման քարտով կհետեւանա նրանց առօրյան

Ազգային ժողովի պետահրավական հանձնաժողովում երեկ լսումներ էին, քննարկվում էր առաջին ընթերցմամբ ընդունված օրենսդրական այն փաթեթը, որի ընդունման դեպքում Հայաստանն անցում է կատարելու անձը հաստատող նոր սերնդի՝ կենսաչափական տվյալներով ինքնությունը հաստատող փաստաթղթերի ներդրման (**«Ազգը»** պատմել է այդ փաթեթի՝ առաջին ընթերցմամբ քննարկումների մասին): Ըստ ԱԺ լրատվական ծառայության՝ հիմնական զեկուցող, փոխոստիկանապետ **Արթուր Օսիկյանը** նշեց, որ նոր սերնդի փաստաթղթերի ներդրումը եվրոպական հանձնառությունների շրջանակում է, ըստ որոնց Հայաստանը երկու տարում պետք է մշակի եւ ներդնի նոր համակարգը: Նախագծերի մշակմանն, ըստ Օսիկյանի, մասնակցել են ոլորտի բազմաթիվ մասնագետներ եւ միջազգային փորձագետներ: ԱԺ պետահրավական հարցերի հանձնաժողովի նախագահ **Դ. Հարությունյանը** եւ Ա. Օսիկյանը իրենց խոսքում նորից ներկայացրին փոփոխությունների իմաստը: Օրինակ՝ փաթեթի մաս կազմող «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրինագծով քաղաքացու ինքնությունն ու քաղաքացիությունը հավաստող անձնագիրը Հայաստանից դուրս գալու եւ վերադառնալու համար է եւ պետք է ունենա ԵՄ չափանիշներին համապատասխան եւ քաղաքացիության միջազգային կազմակերպության երաշխիքային պաշտպանական ապահովումներ՝ կենսաչափական տվյալների էլեկտրոնային պահոց՝ թվային լուսանկար, սոնրագրություն եւ երկու ձեռքերի ցուցամատների դրոշմներ: Օրինագծի հեղինակները հուսով են, որ կենսաչափական տվյալներով անձնագրի ներդրումը կնվազեցնի փաստաթղթերի կեղծման դեպքերը, ավելի արագ անձի նույնականացման հնարավորություն կտա, եւ անցանկալի անձանց հայտնաբերումն ավելի արագ տեղի կունենա: Իսկ որ ավելի կարեւոր է՝ Հայաստանի քաղաքացիները ԵՄ մուտքի վիզա կստանան ավելի պարզեցված կարգով:

«Նույնականացման քարտերի մասին» օրենքը նույնականացման քարտը երկրի ներսում անձի ինքնությունը եւ քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ է լինելու, որը նաեւ հնարավորություն կտա հետեւանքներ քաղաքացու կյանքը, իսկ անցումը նույնականացման քարտերին եւ կենսաչափական տվյալներով անձնագրերին, երկարաձգվելու է քաղաքացիների հայեցողությանը: Զուգահեռ գործող անձնագրերը իրավական ուժ են ունենալու թե՛ երկրի ներսում, թե՛ երկրից դուրս:

Պետահրավական հարցերի հանձնաժողովի նախագահը հնարավորություն տվեց ոլորտի մասնագետներին եւ տարբեր շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներին վիճելի թվացող դրույթների վերաբերյալ քննարկել եւ առաջարկներ անել, որոնք, Դ. Հարությունյանի հավաստմամբ, կառավարությունը հաշվի է առնելու:

Մ. Խ.

«Գիլյոտին համակարգի» տարրերը կլինի Արմեն Եղիազարյանը

Ինչպես հայտնի է, երկրի նախագահի հրամանագրով եւ կառավարության որոշմամբ ստեղծվել են ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխման խորհուրդ եւ «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ՕԻԳ: Դրանց նպատակն է վերացնել գործարար միջավայրին ու շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտող դրույթները, բարելավել եւ պարզեցնել պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունները, կրճատել տնտեսապես ոչ արդյունավետ, ծախսատար եւ աննպատակահարմար մեխանիզմները: Ոչ պաշտոնապես սա կոչվում է «գիլյոտինի համակարգ»:

Մեզ հայտնի դարձավ, որ «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ՕԻԳ-ի տնօրեն է նշանակվելու Արմեն Եղիազարյանը: Հիշեցնենք, որ 90-ականներին նա մի քանի տարի զբաղեցրել է էկոնոմիկայի նախարարի պաշտոնը:

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Ձերը մի քիչ պարզվեցին

1-ին էջից

Խորհրդարանական ընտրություններին ԲՀԿ-ի հավակնությունների մասին հարցին ի պատասխան՝ Գ. Ծառուկյանը նշել է, թե պետք է «առնվազն պահպանել «Բարգավաճ Հայաստանի» այսօրվա ներկայացվածության աստիճանը խորհրդարանում եւ փորձել հասնել ավելիին, քանի որ ԲՀԿ-ն երկրի հզորացմանը եւ ժողովրդի բարեկեցության բարձրացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր ունի, եւ դրանք կյանքի կոչելու համար պետք է օգտագործի նաեւ խորհրդարանական ամբիոնը: Նա տրամաբանական է համարել նաեւ, որ Հանրապետական կուսակցությունն աշխատելու է պահպանել առկա ներկայացվածության մակարդակը եւ հասնել ավելիին. «Մենք միասնական նոպատակներ հայտարարել ենք դեռ ամիսներ առաջ, փետրվարին ստորագրած հուշագրով, նախանշելով, որ մեր ակտիվ քայլերով մեծացնելու ենք իշխող կոալիցիայի դերակատարությունը մեր երկրում եւ խորհրդարանական ընտրությունների արդյունքում հասնելու ենք Հայաստանի Ազգային ժողովում մեր կուսակցությունների ներկայացվածության աճին», ասել է նա: Իսկ ՀՀԿ-ԲՀԿ շուրջը ծավալվող կրքերի վերաբերյալ հարցին Գ. Ծառուկյանը պատասխանել է, թե «առանձին լրատվամիջոցներ, թերեւս նաեւ ձուկ որսալու ակնկալիք ունեցող ջուր պղտորողներ «որոշեցին», որ ինչ-որ խնդիր կա, հորինեցին ինչ-որ նոր հուշագրերի պատմություններ, իրենք ասացին, իրենք հավատացին, չեմ բացառում նաեւ, որ հավատացրին նաեւ որոշ մարդկանց». «Իշխող քաղաքական ուժերը ներկայացնող գործիչներն այս ընթացքում մեկ անգամ չեն հրապարակավ բավականաչափ թափանցիկ ակնարկել, որ մակերեսային հորինովի ածիտածները չեն կարող կապ ունենալ իրական քաղաքական գործընթացների հետ՝ պնդելով, որ մեկնաբանում են միայն քաղաքական ուժերի պաշտոնական հայտարարությունները եւ ուշադրությունից դուրս են թողնելու ամեն տեսակ «խայծերը»: Ես կարծում եմ, որ մեր քաղաքական գործիչները, մամուլը եւ ընդհանրապես հասարակությունը վաղուց արդեն կարողանում են տարանջատել իրական գործընթացները հնարովի ակցիաներից եւ նման «նախաձեռնություններն» իրենց նպատակին հասնել այլեւս չեն կարող մեր երկրում»:

Այս պատասխանը երեկ աշխուժորեն քննարկում էին քաղաքական ուժերի ներկայացուցիչներն ու վերլուծաբանները: Անգամ առաջին նախագահին հարող կայքում համոզված էին, որ այդպիսով ԲՀԿ-ն մերժեց ՀԱԿ-ին, մինչդեռ Տեր-Պետրոսյանը ժամանակին ԲՀԿ-ին հայաստանածին բնական կուսակցություն էր որակել՝ գուցե եւ այդպիսով սպար ուժերով գործընկեր գտնելու հույսով: Իսկ թե ՀԱԿ-ԲՀԿ՝ մեր կարծիքով անհնար գործընկերությունը վախեցրե՞լ է ՀՀԿ-ին, որի ղեկավարներից էլ եկել է Ծառուկյանի երեկվա հայտարարության համար հիմք դարձող մեզ անհայտ ազդակը, դա չենք կարող պնդել, սակայն ենթադրությունների կատեգորիան ոչ որ օրենքից դուրս չի հայտարարել: Ո՞րն է որին հաջորդել՝ Տեր-Պետրոսյա՞նն է, հույսը կտրելով ինչ-որ հզոր գործակցությամբ արտահերթ ընտրությունների գնալու հնարավորությունից, հայտարարել խորհրդարանական հերթական ընտրությունների գնալու մասին, թե՞ Ծառուկյանն ու ՀՀԿ-ն են վերջապես իրենց հաշվարկները հստակեցրել, արդեն էական չէ: Կարվա՞ծ է այս բոլորը Սարկոզիի այցի կամ նախագահ Սարգսյանի՝ Մոսկվա այցելության հետ, թե՞ չի կարված (այս թեմաներն առանձին քննարկման նյութ են), կամ ի՞նչ է ակնարկում Տեր-Պետրոսյանը, երբ ասում է, որ այս պահին իրենցից ոչինչ կախված չէ, էլի էական չէ: Էականը մասամբ նոր իրավիճակն է՝ ՀԱԿ-ը գնում է հերթական ընտրությունների եւ հավանաբար մենակ, որովհետեւ «Ժառանգությունը», ՀՅԴ-ն կամ «Ազատ դեմոկրատները հազիվ թե նրան միանան: ՀՅԴ ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանն երեկ հստակ բացառեց ՀԱԿ-ի հետ համագործակցությունը, «ժառանգությունն ավելի շուտ «Ազատ դեմոկրատներին» կամ ՀՅԴ-ին կգերադասի, քան ՀԱԿ-ին, իսկ ԲՀԿ-ն էլ երեկ դիրքորոշում հայտնեց իր առաջնորդի բերանով (եթե, իհարկե, ԲՀԿ-ի մասով նոր վայրիվերումներ չլինեն): Ուրեմն՝ նորից ծագում է մի նոր համախմբում ձեւավորվելու հրամայականը, որը լցնելու է իշխանության եւ ընդդիմության միջեւ եղած միջակայքը: Պարզ է մի բան, Հայաստանը բոլոր, բացառապես բոլոր քաղաքական ուժերի կարծիքով գնում է հերթական ընտրությունների, եթե, իհարկե, նոր առիթ չլինի ֆորս-մաժորի: Իսկ այդպիսի առիթ ստեղծելն այնքան էլ հեշտ բան չէ: Հերթական ընտրությունների գնալու պարագայում, բոլորն են հասկանում, խաղը գործող իշխանության ձեռքում է: Լավ է դա, թե վատ, դա ուրիշ խնդիր, եւ այդ մասին կխոսենք առաջիկայում:

Ուղեգրություն

Շրջագայելով Արեւմտյան Հայաստանում՝ խուսափեցինք «հայի բախտից»

«Անի տուր» տուրիստական ընկերությունը թերեւս... ամենահայասիրականն է Հայաստանում: Հիրավի, «դեպի ակունքներ» նշանաբանով ուխտագնացությունը հնարավորություն է տալիս շրջել ողջ Արեւմտյան Հայաստանում, ակնբախորեն տեսնել այն, ինչը մեզ այնքան հարազատ է տակավին մանկական տարիներից. Կարս. Անի, Վան, Մուշ, Բիթլիս... Ընկերությունը նոյեմբերին նշում է իր 15-ամյակը: Նրա հիմնադիրները՝ տեր եւ տիկին Վոլոդյա ու Հռիփսիմե Առուշանյանները, վերհիշում են, որ անվտանգության նկատառումներով առաջին խմբերին ուղեկցել են տեղի ոստիկաններն ու հատուկ ծառայությունների գործակալները: Նման խնդիրներ ներկայումս չկան:

Մեր խմբի ուղեւորությունը հարմարեցված էր Դիարբեքիրում հայկական Սբ Կիրակոս եկեղեցու վերաբացմանը: Խումբը «ինտերնացիոնալ» էր՝ հայաստանցիներից բացի կային Ռուսաստանից, Սիրիայից, Լիբանանից, Կանադայից, ԱՄՆ-ից, Վրաստանից եկած հայեր: Առաջին անգամ այցելելով նվիրական երկրամասը՝ զգացի, որ մոսկովյան հեռուներից ունեցած իմ պատկերացումները ներկա իրողությունների մասին որոշակի իմաստով սիրողական են: Կտրելով սահմանը եւ անցնելով քրդական գյուղերի միջով՝ սկզբից մի բան ես մտածում՝ եւ այս երկիրը դեռ հավակնում է դառնալու եվրոպական: Թեեւ, անկեղծ լինենք, հիշյալ գյուղերը հազիվ թե տարբերվեն, ասենք, Թալինի շրջանի բնակավայրերից: Բայց ամեն ինչ փոխվեց, երբ մտանք Կարս: Մի պահ թվաց, թե հայտնվել եմ մերձմոսկովյան որեւէ քաղաքում. գրեթե սոցիալիստական բարեկարգ տիպային շենքեր, սանդարս ուղիղ փողոցներ, լուսավոր խանութներ: Շուտով գուցե հին Կարսից էլ բան չի մնա:

Շատ ավելի աղոտեցրեց Վանը, ուր մենք եղանք բառացիորեն երկրաշարժի նախօրեին: Այսինքն, եթե մեկ օր էլ ավելի մնայինք, արդեն պիտի խոսեինք «հայի բախտի» մասին: Մենք անցանք եվրոպատիպ քաղաքի միջով եւ ուղեւորվելով դեպի Աղթամար՝ զարմացած հարցրինք էսկուրսավարին՝ իսկ ո՞ւր է հին Վանը: Պարզվեց, որ այստեղ արդեն հնից ոչինչ չի պահպանվել: Մեր ուղեւորության ուղեկիցն էր «Ակունք» ազգագրական համույթը: Պետք էր միայն լսել այդ բարձրակարգ երաժշտական խմբի հոգեհույզ ելեւէջումները Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու կամարների ներքո:

Ծաղկեպսակ Սբ Կիրակոս եկեղեցում

Քրդերի ներկայիս գլխավոր քաղաքում՝ Դիարբեքիրում հայկական եկեղեցու վերաբացումը հակասական տրամադրություններ էր առաջացնում: Մի կողմից լավ է, որ վերականգնվում է մոռացվածը: Սակայն ինչո՞ւ մի քաղաքում, որտեղ հայություն չկա: Ինչքան էլ որ հայտնի լինեն պատճառները, անառողջ տպավորություն էր գործում էջմիածնի ներկայացուցիչների բացակայությունը այդ հանդիսությանը:

Ես հատուկ կանգ չեմ առնում ուղեւորության մանրամասների վրա, որտեղ տեսանք հայ ճարտարապետության ու մշակույթի մնացորդները՝ եկեղեցիներ, տներ, ուսումնական շենքեր, բերդակառույցներ, կամուրջներ եւ այլն:

Հնի եւ նորի անջրպետ-պարիսպը

Գյուղերում, էլ չենք ասում նորակառույց շեն բնակավայրերում, առանձնանում են բազմահարկ դպրոցները: Խանութներում բնամթերքները միայն տեղական են, զարմանալի կլիներ, որ քրդերը կարագ ներմուծեին հեռավոր Նոր Զելանդիայից, ինչպես դա արվում է Հայաստանում: Էլ չենք խոսում զարգացած անասնապահության մասին: Ողջ ճանապարհին անթիվ-անհամար են կովերի, այծերի, ոչխարների հոտերը: Եվ այս ամենը ընդամենը մեր աչքի տեսածն է: Եվ դա այն դեպքում, երբ Քրդստանի վերածված Արեւմտյան Հայաստանը համարվում է Թուրքիայի հետամնաց տարածաշրջանը: Մեր հողում քրդերն արդեն դուրս են եկել միջնադարից:

Մեր ուղեւորության առաջին իսկ օրը զուգադիպեց քուրդ գրոհայինների հերթական «ահաբեկչական» գործողությանը, թուրքերի հակահարվածին: Թուրքիան մոլեգնած էր, Էրդողանն իր սպառնալից տեսքով չէր իջնում հեռուստաէկրաններից: Մթնոլորտը հագեցած էր թուրք-քրդական լարվածության հերթական ալիքով: Հայերիս, տվյալ դեպքում կոնկրետ մեր խմբի անդամների նկատմամբ ջերմ վերաբերմունքը առաջին հերթին պետք էր բացատրել նրանց անթաքույց թրքատյացությամբ: (Երբ Վանի հյուրանոցի հաստ բեղերով տարեց սպասավորին ասացի, որ ինքը շատ նման է Օջալանին, նա անասելի պայծառացավ ու ամուր գրկեց ինձ): Չխորանալով բազմաբարդ քաղաքական նրբերանգների մեջ՝ ենթադրենք, որ ապագայում մենք գործ կունենանք ոչ այնքան Թուրքիայի, որքան Քրդստան կոչված անկախ պետության հետ:

Եվս մի պարագա, որ Հայաստանում հուզում է շատերին: Մեր խմբին, հանդիպումների սեփական ծրագրի բերումով հետուառաջ ընկնելով, հետամուտ էր Թուրքիայի քաղաքական իրողություններին խիստ քաջատեղյակ, կենսուրախ ու արտակարգ եռանդուն մի այր՝ Ազգային ժողովի պատգամավոր **Հաղթանակ Ախոյանը**: Ահա եւ այս մարդը պեղել էր իր արեւմտահայ արմատներն ու գտել բազմաթիվ ազգականների, որոնք չէին մոռացել իրենց հայությունը: Մուշի հյուրանոցում, այնուհետեւ երկրաշարժը շրջանցելու կապակցությամբ ռեստորանում նույնպես «արեւմտահայ» տիկին **Ռոզա Ծառուկյանի** մատուցած «մատաղի» ժամանակ մենք էլ շփվեցինք նրանց եւ ուրիշ տեղացի հայերի հետ: Երբ Ախոյանը «ցավդանեմներով» գրկում ու համբուրում էր իր դեռատի զարմիկին, վերջինս շփոթված ու զարմացած ժպիտով նայում էր նրան՝ ինչքա՜ն ջերմ է «օտար» լեզվով խոսող իր այս նոր բարեկամը: Իսկ հանդիպման գագաթնակետը թերեւս դարձավ մշեցի ամենաերկարակյաց՝ 110-ամյա հայի յուրօրինակ «մամլո ասուլիսը»: Ալեհեր մարդը, ավա՜ղ, թարգմանչի օգնությամբ, պատմեց, թե ինչպես է փրկվել ջարդից, վերհիշեց իր «հայերենը», ինչպես ասում են, պատասխանեց ներկաների շատ այլ հարցերի: Ահա թե որ քաղաքում պիտի բացվեր հայկական եկեղեցի: Ծպտյալ հայերի թեման դեռ կարիք ունի վերծանման:

110-ամյա «ծպտյալ» հայը «ասուլիսի» պահին:

Վերադարձին ուղեղիս մեջ ռուսական թերթերից մեկի մի բնութագրումն էր. «Աթաթուրքի Թուրքիան այլեւս չկա, կա Էրդողանի Թուրքիան: Լճացած, պարտքերի մեջ խրված Եվրոպայի համեմատ այս երկիրն արդեն նման չէ երբեմնի «հիվանդ մարդուն»: 9 տոկոս տնտեսական աճով եւ պարտքերի ու բյուջեի բացակայությամբ Թուրքիան ներկայումս շատ ավելի առողջ տեսք ունի, քան եվրոպական շատ երկրներ»: Դժվար է չհամաձայնել **Շարլ Ազնավուրի** հետ՝ Թուրքիան (մեր կողմից ավելացնենք՝ Քրդստանը) զորեղանում է, Հայաստանը՝ դատարկվում: Թուրքիայի եւ Վրաստանի բարեհաջող մասնատներին հաջորդեց Գյումրիի... վագոն-տնակ մասնատումը: Մտանք մեր հայրենյաց հողը մի կողմից կարոտած, մյուս կողմից՝ դառնացած: Երեւանում տխրությունը, որը մեզ կեսգիշերին տուն բերեց, իմանալով, որ Արեւմտյան Հայաստանից ենք եկել, աշխուժորեն հետաքրքրվեց մեր տեսած-լսածով, հետո էլ անսպասելիորեն բռնկվեց. հայավարի ասած, շան լափ թափեց «գյոզալ» կոմունիստներից հետո եկած Հայաստանի ղեկավարների գլխին, որոնք փոխանակ հարուստացնելու ժողովրդին, իրենք են պարարտանում: Մոնչաց ծանր ադրուստից ու կենսապայմաններից, որոնց պատճառով ինքը ստիպված գիշերներն էլ է երթի դուրս գալիս: Փնովեց հայ ժողովրդին, որը չի կարողանում ընտրել մի ղեկավարի, որն ընդունակ լինի ստեղծելու արդար պետություն: Ցավ հայտնեց, որ ուրիշների պես ինքը հնարավորություն չունի արտագաղթելու: Եվ էս հալին էլ ուրիշներից բան են պահանջում՝ իմաստնաբար եզրակացրեց նա, վերջում էլ խնդրելով, որ մի քիչ ավելի վճարեմ «ծայրը-ծայրին» հասցնելու համար: Երկիրը երկիր չէ՝ հրաժեշտ տվեց նա:

Արժե՞ ակադեմիական բնույթ հաղորդել վարորդի ասածներին:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա-Արեւմտյան Հայաստան-Արեւելյան Հայաստան

Հ. Գ. «Ազգ» թերթը շնորհավորում է «Անի տուր» տուրիստական ընկերությանը 15-ամյա հոբելյանի առթիվ:

Դիարբեքիրի մեր հյուրանոցը

ԱԶԳ

Միջազգային

Ադրբեջանը ֆոբիա ունի անգամ հայկական ազգանուններից

Ադրբեջանի՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ դառնալը, որքան էլ արտառոց էր ու ոչ տրամաբանական, այդուհանդերձ, ինչ-որ հույսեր է կարծես ձեւավորել, թե գոնե այդ կարգավիճակում այս երկիրն առավել ժողովրդավարական երեւալու փորձեր կանի: Սակայն Ադրբեջանի պարագայում իրականությունն այն է, որ հայատյացությունը ամենաբարձր մակարդակով մատուցվում է նաեւ ողջ աշխարհին, իսկ միջազգային կոչվող հանրությունը սուսուփուս սպասում է, թե երբ եվրոբնակարաններում կվառվի ադրբեջանական գազը:

Ռուսաստանյան «Կոմերսանտ» թերթը երեկվա իր հրապարակումներից մեկում անդրադարձել է մի փաստի. «Ադրբեջանական ավիաուղիներ» ավիաընկերությունը թույլ չի տվել, որ ՌԴ քաղաքացի, «ԱվտոՎԱԶ» ընկերության արտահանման վարչության ղեկավար Սերգեյ Գյուրջյանը օգտվի իր՝ Մոսկվա-Բաքու չվերթի տոմսից՝ հասկացնելով, թե պատճառը ՌԴ քաղաքացու հայկական ազգանունն է:

Գործնական նպատակներով Բաքու մեկնելու անհրաժեշտություն ունեցող Գյուրջյանին Ադրբեջան չթողնելն, ըստ թերթի տեղեկությունների, առաջին դեպքը չէ, ավելին, ռուսաստանցի իրավապաշտպանների վկայությամբ, հայկական ազգանունով ՌԴ քաղաքացիներին Ադրբեջան չթողնելն արդեն «ոչ թե բացառություն է, այլ միտում», որ տարածվում է անգամ Բաքուն որպես տարանցիկ օդանավակայան օգտագործել պատրաստվող հայկական ազգանունով ՌԴ քաղաքացիների վրա: «Այս դեպքում միջադեպը հասել է ՌԴ նախագահի գրասենյակ, որտեղ այն, ի դեմս ՌԴ նախագահի օգնական Արկադի Դվորկովիչի, բնութագրվել է որպես «ամենաթողություն»», նշում է «Կոմերսանտը»:

Գյուրջյանի՝ սեփական բլոգում ներկայացրած պատմությունն, ըստ թերթի, դարձել է ռուսաստանյան բլոգային միջավայրի անցած շաբաթ օրվա ամենաքննարկվող թեման: Այս պարագայում այլ կերպ, քան խտրականություն, տեղի ունեցածը չի կարելի որակել, անգամ եթե հաշվի առնենք, որ ավիաընկերություններն իրավունք ունեն, անվտանգության նկատառումներից ելնելով, ուղեւորներին չթողնել ինքնաթիռ:

Ազգանվան հիմքով նման արգելքի կիրառումը որեւէ կերպ հիմնավորված չի կարող լինել՝ անգամ անվտանգության ապահովման բացատրություններով: Իսկ Ադրբեջանի պարագայում հստակ է, որ արգելքը հրաման է, թեեւ կարող է չունենալ պաշտոնական կամ գրավոր տեսք:

Ռուսաստանյան այլ լրատվամիջոցներ տեղեկացնում են, որ Գյուրջյանը պատրաստվում է դատի տալ ադրբեջանական ավիաընկերությանը: Ամեն դեպքում, հենց վերջերս «դիվանագիտական հաղթանակ» տոնող ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ Ադրբեջանի նկատմամբ պարտավոր է վերաբերմունք արտահայտել նույն այդ կառույցի մարդու իրավունքների հանձնաժողովը, եթե, իհարկե, այդ հաստատության նպատակը մարդու իրավունքներն ու դրանց պաշտպանությունն են:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պաղեստինը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ

Պաղեստինը փաստացի մտել է մի գործընթաց, որ ամենայն հանգստությամբ կարող է հասցնել ՄԱԿ-ին անդամակցելուն, ասել է թե ճանաչմանը: «Ռոյթեր» գործակալության տեղեկացմամբ՝ ՄԱԿ-ի մշակութային հարցերով գործակալությունը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն երեկ որոշել է լիաժեմ անդամակցություն տրամադրել Պաղեստինցիներին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն ՄԱԿ-ի առաջին հաստատությունն է, որին միացավ Պաղեստինը: Որոշումը կայացվել է ԱՄՆ-ի, Կանադայի, Գերմանիայի եւ Հոլանդիայի՝ դեմ, Ռուսաստանի, Բրազիլիայի, Չինաստանի, Հնդկաստանի, Հարավային Աֆրիկայի եւ Ֆրանսիայի կողմ քվեարկությամբ, Մեծ Բրիտանիան ու Իտալիան էլ ձեռնպահ են մնացել՝ ի ցույց դնելով եվրոպական հաստվածում երկրների տարանջատված մոտեցումը Պաղեստինի ճանաչման հարցին:

ԱՄՆ-ն էլ, ստացվում է, կարող է կրճատել ՅՈՒՆԵՍԿՕ-ի ֆինանսավորումը՝ ելնելով քվեարկության արդյունքներից: ՅՈՒՆԵՍԿՕ-ում ԱՄՆ դեսպան **Դեվիդ Քիլլոնը** հայտարարել է. «Տեղի ունեցածը կարող է դժվարացնել մեր աջակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ին», հիշեցնելով, որ ԱՄՆ-ի դիրքորոշումը մնում է «երկպեսություն» ձեւակերպումը՝ ուղղակի բանակցություններով, որոնց վնասում են ՅՈՒՆԵՍԿՕ-ում կատարվածն ու դրա նման քայլերը:

Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա վերջինիս կողմից հնչող գնահատականը մեկն է եղել, թե Պաղեստինի անդամակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ին «ողբերգություն» է: «Այս որոշումը ողբերգություն է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համար... », հայտարարել է ՅՈՒՆԵՍԿՕ-ում Իսրայելի դեսպան **Նիմրոդ Բարկանը**:

Այդուհանդերձ, Պաղեստինը այսուհետեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 195-րդ անդամն է, որի անդամակցությանը կողմ է քվեարկել 107 երկիր, 14-ը՝ դեմ, 52-ը՝ ձեռնպահ: 12 երկրի ներկայացուցիչներ բացակա են եղել նիստից:

Նշենք, որ արդեն հոկտեմբերի սկզբին Պաղեստինը դարձավ նաեւ գործընկեր Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հետ:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվե՞լ է մոլորակի 7 միլիարդերորդ բնակիչը

Ռուսական հեռուստաալիքները երեկ հաղորդեցին, որ լույս երկուշաբթի գիշերը Կալինինգրադում ծնվել է Երկրի 7 միլիարդերորդ բնակիչը: Երեխայի ծնունդը գրանցել են բժիշկները եւ ՄԱԿ-ի դիտորդները, նշում է newsru.com կայքէջը:

«Ռոսիա-24» հեռուստաալիքը հաղորդում է, որ նորածնի անունն է Պետյա: Նրա հասակը 50 սմ է, քաշը՝ 3600 գրամ: Պյոտր Ալեքսեեւիչ Նիկոլաեւի ծնողները կստանան «Ծնվել է 7 միլիարդի օրը» հուշահավաստագիր:

Սակայն առաջնությունը վիճարկում է մեկ ուրիշ նորածին: Regions.ru գործակալությունը հաղորդում է, որ երեկ կեսգիշերից քիչ անց Կամչատկայի Պետրոպավլովսկում ծնվել է Ալեքսանդր անունով մի մանկիկ (քաշը՝ 3600 գրամ): Հանդիսավոր պայմաններում նորածնի մորը հանձնել են Երկրի 7 միլիարդերորդ բնակչի հավաստագիր: Ծնողները բնակարան կստանա քաղաքի նորակառույց տներից մեկում:

7 միլիարդերորդ բնակչի ծնունդին վերաբերող հայտարարությունը համընկավ Կալինինգրադում ՄԱԿ-ի ազգաբնակչության հիմնադրամի համաշխարհային զեկույցի ներկայացմանը, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Մինչդեռ փորձագետները ընդգծում են, որ չարժե վստահել մոլորակի բնակչության նմանօրինակ հաշվարկին: Մեկ շաբաթ առաջ ժողովրդագիրները հայտարարեցին, որ ՄԱԿ-ը առաջ է անցնում իրադարձություններից, կանխավ պնդելով, թե հոկտեմբերի վերջին աշխարհի բնակչությունը կհասնի 7 միլիարդի սահմանագիծը: Շատ ավելի հավանական է, որ այդ սահմանագիծը հաստվի 2012-ին կամ նույնիսկ 2013-ին:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼ

ԱՄՆ-ը կուժեղացնի ռազմական ներկայությունը Պարսից ծոցի շրջանում

Ամերիկացիները մտադիր են Իրաքից զորքերի դուրսբերումից հետո ուժեղացնել իրենց ռազմական ներկայությունը Պարսից ծոցի շրջանում: Այդ մասին հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը, վկայակոչելով բարձրաստիճան աղբյուրներ:

Պտսավում է, որ ամերիկյան հավելյալ զորքեր կտեղաբաշխվեն Քուվեյթում: Այնտեղից ամերիկացիները կկարողանան վերահսկել Իրաքի անցուդարձը եւ արագորեն արձագանքել Իրանի հետ հակամարտության ծագման դեպքում: Զորքերի թվակազմի հարցը կլուծվի մոտ օրերս ավարտվելիք բանակցություններում:

Բացի դրանից, նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը քննության է առնում Պարսից ծոցի միջազգային ջրեր նոր ռազմանավեր ուղարկելու հարցը:

Տվյալ ծրագիրը մշակվեց այն բանից հետո, երբ Վաշինգտոնին չհաջողվեց Իրաքի հետ համաձայնության գալ ամերիկյան զորքի մի մասը երկրում թողնելու հարցի շուրջը: Հոկտեմբերի 21-ին Օբաման հայտարարեց, որ ամերիկյան բոլոր զորքերը դուրս կբերվեն մինչեւ տարեվերջ:

Պենտագոնի ղեկավար Լեոն Պանետայի տվյալներով, ներկայումս Պարսից ծոցի շրջանում կա 40 հազար ամերիկացի զինծառայող, այդ թվում 23 հազարը՝ Քուվեյթում:

Թերթը գրում է, որ հանրապետականները քննադատում են Իրաքից զորքը դուրս բերելու եւ Աֆղանստանում ռազմական ներկայությունը կրճատելու Օբամայի որոշումները: Նախագահը փորձում է հարթել քաղաքական տարաձայնությունները, հայտարարելով, որ իշխանությունները վճռականորեն կպաշտպանեն երկրի ռազմավարական շահերը:

Երկրաշարժ Չիլիում

Չիլիի հյուսիսում երեկ տեղի է ունեցել 6,0 մագնիտուդով երկրաշարժ: Զոհերի եւ ավերածությունների մասին չի հաղորդվում: Չիլիի համալսարանի երկրաֆիզիկայի ինստիտուտի տվյալներով, էպիկենտրոնը եղել է Տալտալ քաղաքից 60 կմ հեռու եւ մայրաքաղաք Սանտյագոյից 1400 կմ հյուսիս: Օջախը 47 կմ խորության վրա էր:

Երկրակեղեւի տատանումները զգացվել են մի քանի բնակավայրում, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

2010-ի փետրվարի 27-ին Չիլիում տեղի էր ունեցել 8,8 մագնիտուդով ավերիչ երկրաշարժ, որի հետեւանքները դեռ լրիվ չեն վերացվել: Պաշտոնական տվյալներով, այն ժամանակ զոհվածների թիվը 524 է, 31 մարդ համարվում է անհետ կորած: Այդ երկրաշարժի պատճառած ընդհանուր վնասը 30 մլրդ դոլար է, որը կազմում է Չիլիի ՆՀԱ-ի 18 տոկոսը: Վերականգնողական աշխատանքները շարունակվում են եւ պետք է ավարտվեն 2014-ին:

Ղրղզստանի վարչապետը ընտրվել է նախագահ

Ղրղզստանում կիրակի օրն անցկացված նախագահական ընտրությունների քվեաթերթիկների 95 տոկոսի հաշվարկից հետո պարզվել է, որ երկրի գործող վարչապետ Ալմազ Աթամբաեւը ստացել է քվեների 62,95 տոկոսը: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:

Նախագահության թեկնածուներից Ադախան Մադումարովը ստացել է քվեների 14,92 տոկոսը, Կամչիբեկ Թաշիեւը՝ 14,42 տոկոսը: Մյուս թեկնածուները 1 տոկոսից քիչ են ստացել: Ընդամենը կար նախագահության 16 թեկնածու:

Թաշիեւի շտաբում հայտարարել են, թե նախագահական ընտրություններն անցել են բազմաթիվ խախտումներով, եւ պահանջել են անցկացնել երկրորդ փուլ: Ինքը՝ Թաշիեւը, հրաժարվում է մեկնաբանել քվեարկության արդյունքները:

Բացի դրանից, նախագահության մի քանի թեկնածուներ պահանջում են ԿԸՀ անդամների հրաժարականը՝ վկայակոչելով խախտումները: Վերջիններիս թվում նշվում են ընտրողներին տեղամասեր բերելը, բազմակի քվեարկությունը, ընտրացուցակների սխալները եւ «վարչական ռեսուրսի կիրառումը»:

Հաղորդվում է, որ ընտրությունների ընթացքում «Հանուն օրինականության եւ մարդու իրավունքների» ազգային շտաբը 141 ծանուցում է ստացել խախտումների վերաբերյալ: Խախտումների մեծ մասն արձանագրվել է Բիշքեկում:

Ղրղզստանի օրենսդրության համաձայն, երկրի նախագահ է դառնում քվեների ավելի քան 50 տոկոսը ստացած թեկնածուն: Ընտրությունների պաշտոնական արդյունքները կհրապարակվեն 3 շաբաթվա ընթացքում:

80-ԱՄՅԱԿ

Մեր մշտաժպիտ դերասանուհին

Սվետլանա Գրիգորյանը՝ մեր Ռոզը («Տախտ, տախտ») մշտապես գերել է իր հանդիսատեսին, վեց տասնամյակից ավելի դարձել սիրված ու Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի հիմնասյուներից մեկը: Դերասանուհին իր ուրույն խաղով դարձել է էսալոն, դարձել ուղեցույց սերունդների համար: Բեմում Սվետլանան, չնայած իր կլորիկ-թմբլիկ ծանրակշիռ մարմնի, բմբուլի պես թեթեւ է, պարում է, թռչկոտում, երգում եւ դերը այնպես մատուցում, որ երկար ժամանակ մնում է հանդիսատեսի հիշողության մեջ:

Շատերը նրան ընդօրինակում են, մեջբերում, փորձում նմանվել, սակայն դա գրեթե չի հաջողվում: Սվետլանա Գրիգորյանը որքան որ պարզ ու մարդամոտ է, այնքան բարդ ու պատասխանատու է իր կերտած յուրաքանչյուր դերի հանդեպ եւ հենց դրանում է նրա դերասանական փայլուն տաղանդի բացահայտումը: Անցած դարի կեսին նա թատրոն եկավ ածեմյանական դպրոցի բովով անցած, մեծ դերասանպետի մանկավարժական տաղանդով օծված, խաղաց, հիացրեց ու մինչեւ այժմ էլ հիացնում է իր խստապահանջ հանդիսատեսին:

Շուրջ 62 տարի դերասանուհին պարոնյանական բեմում կերտեց հարյուրավոր դերեր, նոր գույն, նոր որակ ու տեսակ բերեց բեմ՝ նրանով ժանրը գտավ եւս մի անզուգական մեկնաբանի, որի շնորհիվ նաեւ բարձրացավ թատրոնի հեղինակությունը: Նրան սիրեցին ու գնահատեցին բոլոր ժամանակների մեր մեծերը: Սվետլանա Գրիգորյանը նաեւ բեմական խոսքին, լեզվին մեծ կարեւորություն տվող դերասանուհի է, կերպարը խոսքի օգնությամբ բացող արվեստագետ, անկախ նրանից դերը օպերետային է, կենցաղային, բնութագրական, ֆարսական, թե հերոսական:

Անվերջանալի հմայքի տեր դերասանուհին հատկապես աչքի է ընկել բնավորության հատուկ գիծ ունեցող դերերով՝ Բալասան («Ծաղիկների աշխարհում»), Թագուհի («Ախ, ներվե՛ր, ներվե՛ր»), 30 տարի շարունակ բեմում իր անզուգական խաղընկեր Կարդ Խաչվանքյանի հետ առասպելական հաջողության արժանացած Ռոզ («Տախտ, տախտ»), Սաթենիկ («Իմ զոհանչը»), Մարթա («Աստմնաբույժն արեւելյան»), Ալիս («Ծաղրածուի որդին»), եւ այսպես շարունակ մինչեւ օրս:

Նա վայելեց նաեւ սփյուռքահայերի ու օտարազգիների մեծարանքն ու արժանացավ «Ծիծաղի թագուհի» տիտղոսին: Նրա յուրաքանչյուր բառը ժպիտով ու ջերմությամբ է ընդունվում ու դառնում սպեղանի շատերի համար: Նման ժողովրդականություն վայելող Հ�հ ժողովրդական արտիստուհին ութ տասնամյակ հետեւում թողած երազում է խաղալ ու էլի խաղալ, քանի որ, ինչպես ասաց «Ազգի» հետ զրույցում, «դերասանն առանց բեմի կյանք չունի: Իսկ ես բեմի մարդ եմ, բեմում էլ պիտի ավարտեմ իմ բեմական կյանքը: Չկարծեք թե շուտով, ոչ՛, ես դեռ շատ եմ խաղալու ու դուք էլ ներկա եք լինելու, իմ սիրելի ու պատշելի հանդիսատես: Առանց ձեզ, ես Սվետլանա կմնայի, դո՛ւք ինձ սիրելիք դառնալ Ռոզ, Մարթա, Անուշ ու այսպես շարունակ...», ասում էր ու ժպտում, գրկում իրեն մոտեցող թատերասերներին, համբուրում եւ նաեւ հուզվում:

«Դե ասա, այս վերաբերմունքին, այս ապրումներին ինչպե՞ս չհուզվեմ եւ չգանահատեմ՝ մի նոր դերակատարում մատուցելով: Սա է գաղտնիքը իմ բեմարվեստի հաջողության», ասաց Սվետլանա Գրիգորյանը եւ շտապեց բեմ բարձրանալ, որտեղ հոբելյանական հանձնաժողովը մեծ շուքով նշում էր սիրելի դերասանուհու հոբելյանը:

Հոդվածը պատրաստ էր, երբ նախագահի մամուլի գրասենյակից տեղեկացրին, որ դերասանուհին՝ Սվետլանա Ռուբենի Գրիգորյանը, պարգեւատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Տաճար տանող ճանապարհը

Վաստակաշատ շինարար Վազգեն Պողոսյանի ամենամեծ հպարտությունը Երեւանում իր կառուցած «Ս. Գրիգոր Լուսավորիչ» մայր եկեղեցին է: Երբ մայր եկեղեցու կառուցման հայտարարված մրցույթում հայտ ներկայացրեց նաեւ Վազգեն Պողոսյանի ղեկավարած «Երեւանշին» բաց բաժնետիրական ընկերությունը, վստահությունը գալիս էր նյութատեխնիկական խոշոր բազայի առկայությամբ, նախորդ տարիներին իրականացրած կառուցապատման մեծ ծավալներով եւ՝ եկեղեցաշինության փորձով ու այդ նվիրական, պատասխանատու գործին հավատավոր մարդու մոտեցմամբ: Այս վերջին երկու հանգամանքը, թեպետ զուտ բարոյական հարթության վրա էին, սակայն կարեւորվում էին իր հայրենի Գեղհովիտ գյուղում կառուցված «Թուխմանուկ» եկեղեցու կառուցման փաստով ու հոգեւոր արժեքների հանդեպ ունեցած Պողոսյանի վերաբերմունքով: «Երեւանշին»-ը շահեց մրցույթը, եւ սկսվեց վիթխարի շենքի կառուցումը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» մայր եկեղեցին այսօր Երեւանի կենտրոնում:

Նորանկախ Հայաստանում 1998 թվականին սկսված եւ 2001-ին ավարտված առաջին խոշոր կառույցն էր, որ դեռ տարիներ առաջ նախաձեռնել էր Վազգեն Ա վեհափառը, սկսվեց կառուցվել Գարեգին Ա վեհափառի եւ ավարտվեց Գարեգին Բ վեհափառի օրոք՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյա հոբելյանի:

-Մեր սերունդը հպարտանում է իր նախնիների՝ հազարամյակներով թողած հուշարձաններով: Մեզ բախտ վիճակվեց այս եկեղեցու կառուցումով շարունակել նրանց գործը: Սա մեծ պատիվ էր մեզ համար:

Աշխատում էին երկիրթ: Մարդիկ հետաքրքրությամբ այցելում էին կառույց: Տեսնելով ժողովրդի այդ չդադարող հոսքը, Պողոսյանը շինհրապարակում փայտե մեծադիր խաչ տեղադրեց, տակը՝ մոմավառության սեղաններ, հրավիրեց հոգեւորականներ՝ օրհնելու այդ ձեռնարկումը: Մարդկանց մտածելակերպն էլ մի տեսակ փոխվեց՝ ազգային հոգեւոր զարթոնք էր, բացօթյա այդ վայրում անգամ կնունքներ կազմակերպվեցին՝ տեղը տեղին, հոգեւորականների մասնակցությամբ: Դեռ չկառուցված եկեղեցին արդեն սրբավայր էր:

- Ես այս կառույցի մեջ տեսնում եմ 1700 տարվա մեր ժողովրդի հավատքի ողջ բեւեռացումը: Այս եկեղեցին մեր հոգու քարեղեն պատկերն է, մեր հավատքի անլռելի զանգակատունը:

- Հիմա մեր երկիրը դժվարություններ ունի, եւ կարծես թե, մեր ուշադրությունն ավելի շատ տնտեսական նպատակահարմարություններ ստեղծելուն պիտի ուղղված լինի:

- Այն ժամանակ ավելի շատ էին այդ դժվարությունները, բայց 1700-ամյա հոբելյանին հարկավոր էր մեր մեծ նվերը, եւ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» մայր եկեղեցու կառուցումն ես համարում եմ մեր ժողովրդի ընծան այդ մեծ հոբելյանին: Գալով մեր օրերին, ասեմ հետեւյալը. դժվարություններ, ինչ խոսք, դեռ շատ ունենք: Դրանք անկախության ճանապարհին ծառացած դժվարություններ են, որոնք հաղթահարելի են: Միայն թե միաբանություն ու գումարյալ ջանքեր են հարկավոր: Հարկավոր է, որ ոչ միայն եկեղեցի կառուցող, այլեւ եկեղեցիով կառուցվող ազգ համարվենք, համախմբվենք մեր հավատքի ու մեր անկախության գաղափարի շուրջ: Ականջալուր լինենք Եղիշեին. «Միաբանությունը բարի գործերի մայրն է»:

Աստվածահաճո գործը միշտ էլ զարդարել է մարդուն, միշտ էլ նրան ներքին ուժ է տվել, մտահղացումների առաջ աղբյուր եղել, եւ բնավ էլ պատահական չէր, որ, այլեւս փորձն ու շինարարի մասնագիտական խորագիտությունը ձեռք բերած Վազգեն Պողոսյանն այդ վիթխարի աշխատանքը պատվով հաստրեց իր լրումին՝ գնահատանքի պսակ որպես ստանալով հայրենի երկրի պետական մրցանակը:

- Այսօրինակ գործերի մեջ, որոնք մեր հոգեւոր կյանքի սյուներն են,-ասում է Պողոսյանը,- մի տեսակ փոխվում ես էությամբ, ինչ-որ ներքին մի ուժ է պատում քեզ, լցվում ես հաշտությամբ եւ զորությամբ, հոգու, ներաշխարհի բավարարություն պարում: Ես հիմա նոր եմ հասկանում, թե ինչ զորեղ բան է հավատքի ուժը:

Վազգեն Պողոսյանն այն շինարարն է, այն կազմակերպիչը, որին մշտապես վստահվել են շատ պատասխանատու կառույցների շինարարություն կամ վերանորոգում: Նրա ղեկավարած «Երեւանշինը» 2004 թվականին վերանորոգեց Օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնը, Արամ Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիայի շենքը: Հիմնովին վերակառուցեց ու գեղեցիկ տեսքի բերեց Հանրապետության հրապարակը: Կառավարության պարգեւը չուշացավ՝ «Անանիա Շիրակացի» մեդալ:

- Շինարարության մեջ մեծ պոեզիա կա,-ասում է Վազգենն ու Չարենցից մեջբերում անում. «...Ջեր ձիրքով թողիք աշխարհում դուք անանց եւ անջինջ մի հետք, //Եվ մնացիք հավիտյան քերթության վարպետներ անմահ...»: «Ս. Գրիգոր Լուսավորիչ» մայր եկեղեցի մտնողը, կամ օպերայի ու ֆիլհարմոնիայի հանդիսատեսն ի՞նչ մտորելու բան ունի, թե ով է կառուցել կամ վերանորոգել այդ շենքերը, նրա համար կարեւոր է, որ դրանք կան, դրանք պահանջված են: Շինարարներիս մնում են ուրախությունն ու հպարտությունը:

Կառուցած շենքերով ուրախ ու հպարտ շինարար, տեխնիկական գիտությունների դոկտոր Վազգեն Պողոսյանն իր վաթսունամյա շեմին թե անցյալ օրերին անդրադարձ անի, նույն հպարտությունը պիտի ապրի. ՀՀ Գերագույն խորհրդի, ապա եւ Ազգային ժողովի պատգամավոր, ՀՀ շինարարների միության պատվավոր նախագահ, ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր, «Անանիա Շիրակացու» մեդալակիր, ուսումնական ձեռնարկների, հինգ գրքերի եւ երեսունից ավելի գիտական հոդվածների հեղինակ, «Երեւանշին» ԲԲԸ խորհրդի նախագահ, Ճարտարագիտական ակադեմիայի իսկական անդամ, համադրաբար դասախոսական աշխատանք Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանում՝ պարգեւատրված ՀՀ քաղաքաշինության նախարարության եւ այդ բուհի ոսկե մեդալով:

Պարենական արմատներ ունենալով Պատմական Ալաշկերտում, որտեղից, եղեռնի հետեւանքով 52 ընտանիք գաղթեց ներկայիս Մարտունու Գեղհովիտ գյուղ, Պողոսյանը հեղինակեց «Գեղհովիտ» սվարածավալ մենագրությունը, իր ձեւակերպումով՝ «Ի հիշատակ մեր նախնիների եւ ի պահ նոր սերնդին»:

- Ձեր այս հարուստ կենսագրությունը հանկարծ չփոխի՞ Ձեր բնույթը:

- Ես էլի նույն մարդն եմ, գուցե ավելի հասարակ: Ամեն մարդ պարտավոր է իր ապրած տարիներին իր կյանքի գործն անել՝ գնահատականը թողնելով ուրիշներին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ

Նորա Արմանիի վարպետության դասերը ու երկունքի մեջ գտնվող գիրքը

Նորա Արմանին նորից հրավիրվել է Հայաստան, որպեսզի վարպետաց դասեր անցկացնի Երեւանի Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում, որից հետո կմեկնի ԼՂՀ ԵԹԿՊԻ-ի մասնաճյուղ: Այդ մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց բուհի ռեկտոր **Արմեն Մազմանյանը** եւ հավելեց. «Ինստիտուտ վարպետաց դասեր անցկացնելու համար տարբեր երկրներից վարպետներ ենք հրավիրում, որոնք իրենց փորձն ու գիտելիքներն են փոխանցում ուսանողներին: Ֆինանսական միջոցները թույլ չեն տալիս վերականգնել նախկինում գոյություն ունեցող դասական ավանդույթները՝ մեկնել վերապատրաստումների: Այժմ միայն հնարավորություն ունենք վարպետներ հրավիրել՝ «աշխարհը բերել ներս», եւ այս անգամ Հայաստանում է աշխարհահռչակ հայազգի դերասանուհի Նորա Արմանին»: Ա. Մազմանյանը կարեւորում է նմանատիպ նախաձեռնությունները եւ մյուս բուհերին հորդորում ռազմավարություն դարձնել վարպետաց դասերը (նշենք որ Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանը նույնպես նման նախաձեռնություններով է հանդես գալիս):

Նորա Արմանին իր հերթին նշեց. «Մեծ ուրախությամբ եմ եկել Հայաստան, որպեսզի իմ գիտելիքները եւ կարողությունները փոխանցեմ նոր սերնդին, ինչպես նաեւ որոշ բաներ հայ ուսանողներից սովորեմ: Հայ երեխաները չեն տարբերվում այլ երկրների երեխաներից, ի դեպ նրանք շատ ավելի ջերմ են: Ես միշտ ասում եմ, որ ուսուցանել նշանակում է նաեւ սովորել»:

Դերասանուհին նշեց նաեւ, որ ԵԹԿՊԻ-ի ուսանողներին տվել է իր հուշատետրը, որպեսզի նրանք գրեն իրենց ստացած տպավորությունների մասին: Նորա Արմանին եւս առավել անկեղծացավ. «Մի քանի օր առաջ կարդացել եմ տետրը եւ շատ հուզվել, հասկացել, որ աշխատանքը զուր չի անցել»:

Ի՞նչ է տվել Նորա Արմանիի անցկացրած վարպետաց դասերը հարցին «**Ազգ**»-ի հետ զրույցում ուսանողուհի **Մարիամ Հակոբյանն** ասաց. «Ես շատ բան սովորեցի մեկ շաբաթվա ընթացքում, հիանալի դասեր անցկացվեցին: Մենք սովորեցինք բեմում օգնել միմյանց, ոչ թե խանգարել, իմպրովիզներ կատարել, բեմը ճիշտ օգտագործել, չմագնիսանալ եւ ամենակարեւորը՝ ամբողջովին ձերբազատվեցի կոմպլեքսներից»:

Սկսած ընթացիկ տարվա հուլիսից առ այսօր Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում տեղի են ունեցել երկու տասնյակից ավելի վարպետաց դասեր:

Շուտով լույս կտեսնի ֆրանսահայ դերասանուհի Նորա Արմանին «Չորս քույրեր» գիրքը, որը նվիրված է 1915-ի Հայոց ցեղասպանությունից փրկված իր նախնիներին: «Գիրքը իմ մեծ մոր եւ նրա երեք քույրերի մասին է: Նրանք եղել են չորս քույր, որոնք ծնվել են Եգիպտոսում, իմ մեծ մոր հայրը մահացել է եւ չորս քույրերով հաստատվել են Կեսարիայում: Չորս քույրերից մեկը գնացել է Ավստրալիա, մյուսը՝ Կանադա, երրորդը՝ իմ մեծ մայրը մնացել է Եգիպտոսում, իսկ չորրորդը եկել է Հայաստան: Չորս քույրերի պատմության միջոցով ես ցանկանում եմ պատմել հայերի պատմությունը», ասաց գրքի հեղինակը՝ Նորա Արմանին: Դերասանուհին հավելեց, որ հուսով է գիրքն ավարտել 2015 թ.-ին՝ Ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Դերասանուհին կարեւորում է այն հանգամանքը, որ պետք է շատ գրվեն նման բովանդակության գրքեր, ֆիլմեր նկարահանվեն, որպեսզի համայն աշխարհն իմանա, թե ինչ է կատարվել 1915 թ.:

Անդրադառնալով ամերիկացի հայտնի կինոռեժիսոր Ջաֆ Ջոհանսենի «Ջյուն է գալիս Լոս Անջելեսում» ֆիլմին դերասանուհին ասաց. «Թեեւ ֆինանսական խնդիրների պատճառով որոշ ժամանակ դադարեցվեցին նկարահանումները, սակայն շուտով կավարտենք վերջին մասի նկարահանումները»: Դերասանուհին ֆիլմում մարմնավորում է հետախույզ փաստաբանի կերպարը:

Նորա Արմանին ծնվել է Եգիպտոսում, ամուսնանալուց հետո աորել է Ֆրանսիայում, Ամերիկայում, կրկին Ֆրանսիայում, այժմ՝ Նյու Յորքում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎՍԱԿԻՄՅԱՆ

Պատանի հայ շախմատիստներն օլիմպիական փոխչեմպիոններ

Թուրքիայի Իզմիթ քաղաքում ավարտվեց մինչեւ 16 տարեկանների շախմատի պատանեկան համաշխարհային օլիմպիադան: Ցավոք, գործող չեմպիոն Հայաստանի հավաքականին չհաջողվեց 2-րդ տարին անընդմեջ նվաճել օլիմպիադայի հաղթողի տիտղոսը: Հայ պատանի շախմատիստները 10 հնարավորից վաստակելով 28,5 միավոր, զբաղեցրին 2-րդ տեղը՝ 1,5 միավորով զիջելով չեմպիոն հռչակված Ռուսաստանի հավաքականին:

7-րդ տուրում Հայաստանի հավաքականը ոչ-ոքի խաղաց Իրանի շախմատիստների հետ: Մեր թիմից հաղթեցին Կարեն Գրիգորյանն ու Արման Միքայելյանը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Պռույա Իդանիին եւ Ահմադ Ասգարիզադեհին: Իսկ Հովհաննես Գաբուզյանն ու Տիգրան Հարությունյանը պարտվեցին: Իսկ ռուսները 3-1 հաշվով հաղթելով հնդիկներին, կես միավորով գերազանցեցին հայերին եւ շրջանցելով նրանց, առաջին անգամ գլխավորեցին աղյուսակը:

8-րդ տուրում մեր հավաքականը վերադարձրեց առաջատարի դիրքը՝ 4-0 հաշվով ջախջախելով անգլիացիներին: Գրիգորյանը հաղթեց Ջեյմս Հոլանդին, Գաբուզյանը պարտության մատնեց Գրեյգ Վիթֆիլդին, Միքայելյանն առավելության հասավ Հենրիկ Ստեփանյանի նկատմամբ, իսկ Աղրեսյանը շահեց Պետեր Բաթչելորի հետ անցկացրած պարտիան:

Հայ շախմատիստների համար ճակատագրական եղավ 9-րդ տուրում ղազախներից 1,5-2,5 հաշվով կրած պարտությունը: Անհաջող խաղացին առաջատարները՝ Կարեն Գրիգորյանն ու Հովհաննես Գաբուզյանը, որոնք պարտվեցին համապատասխանաբար Ալիբեկ Իգամբերգենովին եւ Այան Ախմետովին: Միակ հաղթանակը տոնեց Արման Միքայելյանը՝ պարտության մատնելով Դինարա Սադվոկասովային: Տիգրան Հարությունյանը հաշտություն կնքեց Ջանաթ Սայինի հետ: Իսկ ահա ռուսները 3,5-0,5 հաշվով պարտության մատնեցին Մալայզիայի ընտրանուն:

Ավարտական տուրից առաջ ռուսները 1,5 միավորով գերազանցում էին հայերին: 10-րդ տուրում մեր պատանիները 3,5-0,5 հաշվով հաղթեցին Ղրղզստանի շախմատիստներին, իսկ ռուսները 3,5-0,5 հաշվով պարտության մատնեցին չեխերին, ինչը բավարար էր չեմպիոն հռչակվելու համար:

Վերջին մրցախաղում Կարեն Գրիգորյանը հաղթեց Բակայ Եսենբեկին, Տիգրան Հարությունյանը պարտության մատնեց Այդար Կենենբաեւին, իսկ Արման Միքայելյանն առավելության հասավ Կելսինբեկ Իսակջանովի նկատմամբ: Հովհաննես Գաբուզյանը հաշտություն կնքեց Թագիր Թալայբեկովի հետ:

27,5-ական միավոր վաստակեցին Իրանի եւ Ադրբեջանի շախմատիստները: Իրանցիները 3-1 հաշվով պարտության մատնեցին ղազախներին, իսկ Ադրբեջանը 4-0 հաշվով ջախջախեց Թուրքիայի հակառակորդին: Լրացուցիչ գործակիցներով բրոնզե մեդալակիր դարձավ Իրանի հավաքականը:

Մեդալների հավակնորդները հաղթեցին

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 27-րդ տուրը հատկանշական էր նրանով, որ արծաթե եւ բրոնզե մեդալներին հավակնող 4 թիմերն էլ հաղթեցին:

ՀՀ չեմպիոնի կարգավիճակով իր առաջին խաղն անցկացրեց «Ուլիսը»՝ «Հրազդանում» հյուրընկալելով «Միկային»: Խաղն անհաջող դասավորվեց ուլիսցիների համար, որոնք 0-3 խոշոր հաշվով պարտվեցին: «Միկայի» կազմում 2 գոլ խփեց Նարեկ Բեգլարյանը, մեկ անգամ էլ աչքի ընկավ Սեմյոն Մուրադյանը: «Միկայի» համար այդ հաղթանակն անչափ կարեւոր էր մեդալների համար մղվող պայքարում: Մրցանակակիր դառնալու համար թիմին անհրաժեշտ է ավարտական տուրում հաղթել «Փյունիկին»:

Մեդալների նվաճման ճանապարհին կարեւոր հաղթանակ տոնեց նաեւ «Բանանցը», որը Իջեւանում հյուրընկալվել էր «Շիրակին»: Արդեն 10-րդ րոպեին առաջնության լավագույն ռմբարկու Բրունո Կորեան բացեց հաշիվը, իսկ խաղավարից 8 րոպե առաջ Բեսոն ամրագնդեց «Բանանցի» հաղթանակը՝ խփելով 2-րդ գոլը:

Հերթական հաղթանակը տոնեց «Փյունիկը»: Սակայն հաղթանակը փյունիկցիներին դժվարությամբ տրվեց: «Արարատը», որ եզրափակում է աղյուսակը, համառ դիմադրություն ցույց տվեց երկրի նախկին չեմպիոնին: Սակայն առաջին խաղակեսի ավարտին արարատցիները սեփական տուգանային հրապարակում սխալվեցին եւ Արթուր Յուզբաշյանը գրավեց դարպասը: «Արարատը» կարող էր խուսափել պարտությունից, սակայն Ալեքսանդր Պետրոսյանի հարվածը դիպավ դարպասածողին:

«Գանձասարն» էլ շարունակում է պայքարը մեդալների համար: Կաղանում դաշտի տերերը 1-0 հաշվով հաղթեցին «Իմպուլսին»: Խաղի ելքը վճռեց Գուսլավո Կորեայի խփած միակ գնդակը:

Նոյեմբերի 5-ին առաջնությունը կհասի վերջնագիծը: Ավարտական տուրից առաջ 4 թիմերը հավակնում

են արծաթե եւ բրոնզե մեդալներին: Դրանց տերերը հայտնի կդառնան «Միկա»-«Փյունիկ», «Բանանց»-«Գանձասար» հանդիպումների ավարտից հետո:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուլիս	27	15	7	5	37-21	52
2. Գանձասար	27	12	9	6	31-18	45
3. Փյունիկ	27	12	9	6	33-28	45
4. Բանանց	27	12	7	8	42-30	43
5. Միկա	27	12	7	8	36-25	43
6. Իմպուլս	27	10	6	11	36-35	36
7. Շիրակ	27	5	7	15	24-41	22
8. Արարատ	27	2	4	21	13-54	10

Ռմբարկուները

Բրունո Կորեա	«Բանանց»	16
Նարեկ Բեգլարյան	«Միկա»	11
Գեորգի Կրասովսկի	«Ուլիս»	8
Զավեն Բաղդասարյան	«Իմպուլս»	8
Էդգար Մանուչարյան	«Փյունիկ»	8

Պետրա Կվիտովան ուժեղագույնն է աշխարհում

Սամբուլում 8 ուժեղագույն թենիսիստուհիների մրցավեճը, որոնք վիճարկում էին կանանց աշխարհի ոչ պաշտոնական չեմպիոնուհու տիտղոսը: Եզրափակիչում մրցեցին չեխ Պետրա Կվիտովան եւ բելառուս Վիկտորիա Ազարենկոն: Հաջողությունն ուղեկցեց Կվիտովային, որը հաղթեց 3 խաղափուլում (7-5, 4-6, 6-3):

Տարվա արդյունքներով թենիսիստուհիների դասակարգման ցուցակում առաջատարի դիրքը պահպանեց դանիացի Կարոլինա Վոզնյացկին: Պետրա Կվիտովան բարձրացավ 2-րդ հորիզոնական, Վիկտորիա Ազարենկոն եզրափակեց լավագույն եռյակը:

Ադեբայորը կտեղափոխվի «Ռեալ»

Անգլիական «Մանչեսթր Սիթիի» հարձակվող Էմանուել Ադեբայորը շուտով կլքի ակումբը: Անգլիական ակումբը համաձայնվել է նրան 5 մլն եվրոյով վաճառել Մադրիդի «Ռեալին» կամ էլ փոխանակել Ռաուլ Ալբիոլի հետ: Նշենք, որ Ադեբայորը վարձավճարով անցած մրցաշրջանի 2-րդ կեսում հանդես էր գալիս «Ռեալում»: Ֆուտբոլիստն արդեն նախնական բանակցություններ է վարել արքայական ակումբի հետ:

ԲՄԲՇԱՄԱՐՏ

Յուրի Պատրիկեեւն արժանացավ ոսկե մեդալի

Տալլինում անցկացվեց հունահռոմեական ոճի ըմբշամարտի 1936-ի օլիմպիական չեմպիոն Քրիստիան Պալուսալուի հուշամրցաշարը: Հաջող հանդես եկավ Հայաստանը ներկայացնող գերծանրաշային Յուրի Պատրիկեեւը, որը հաղթելով բոլոր մրցակիցներին, այդ թվում էստոնացի Խեյկի Նաբինին, արժանացավ ոսկե մեդալի:

Մինչեւ 96 կգ քաշային կարգում հաղթող ճանաչվեց Մախիմ Սաֆարյանը, որը հանդես էր գալիս ՌԴ հավաքականի կազմում: Առավել հաջող հանդես եկան ուկրաինացի ըմբիշները՝ նվաճելով մեկ ոսկե, 2 արծաթե եւ 3 բրոնզե մեդալ:

Հրանտ Մելքումյանը բավարարվեց 3-րդ տեղով

Ֆրանսիայի Բաստիա քաղաքում ավարտվեց շախմատի միջազգային մրցաշարը, որին մասնակցեցին Հայաստանի չորս շախմատիստներ: Ավարտական տուրից առաջ Հրանտ Մելքումյանը Կրիշնան Սասիկիրանի, Իվան Չեպարինովի հետ 6,5-ական միավորով գլխավորում էր աղյուսակը: Ցավոք, վերջին տուրում Մելքումյանը սեւերով պարտվեց Սասիկիրանին եւ 6,5 միավորով գրավեց 3-րդ տեղը: 7,5 միավորով հաղթող ճանաչվեց Կրիշնան Սասիկիրանը: 7 միավորով 2-րդ տեղը գրավեց Գավայն Ջոնսը՝ հաղթելով Չեպարինովին:

Ավետիք Գրիգորյանը ոչ-ոքի խաղալով Մարկ Առնոլդի հետ, 6,5 միավորով զբաղեցրեց 10-րդ տեղը: 6-ական միավորով 16-րդ եւ 17-րդ տեղերը գրավեցին Վահե Բաղդասարյանն ու Աղասի Ինանցը: Վահեն հաղթեց Ալեքսանդր Պետրոսկուն, Ինանցը հաշտություն կնքեց Ռադոսլավ Դիմիտրովի հետ:

Վանես Մարտիրոսյանի հերթական հաղթանակը

ԱՄՆ-ում բնակվող պրոֆեսիոնալ հայ բռնցքամարտիկ Վանես Մարտիրոսյանը շարունակեց իր անպարտելի մենամարտերի շարքը՝ տոնելով 31-րդ հաղթանակը: ԱՄՆ-ի Օկլահոմա նահանգի Տակերվիլ քաղաքում անցկացված մենամարտում հայ բռնցքամարտիկը միավորներով (100-90, 100-90, 99-91) հաղթեց կոլումբիացի Ռիչարդ Գուլյերեսին: Վերջինս պրոֆեսիոնալ ռինգում 36-րդ հանդիպումն անցկացրեց՝ կրելով 8-րդ պարտությունը:

Այս հաղթանակից հետո Վանես Մարտիրոսյանը մեկ անգամ եւս հայտարարել է, որ ցանկանում է ձեռնոց նետել առաջին միջին քաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Սաուլ Ալվարեսին:

«Արարատն» էլ շնորհավորեց Նիկիտա Սիմոնյանին

Խորհրդային նախկին անվանի ֆուտբոլիստ եւ վաստակաշատ մարզիչ Նիկիտա Սիմոնյանի 85-ամյակին էր նվիրված Մոսկվայում անցկացված ֆուտբոլի վետերանների մրցաշարը, որին մասնակցեցին նաեւ «Արարատի» վետերանները: Ընկերական մթնոլորտում կայացած 3 մրցախաղերն էլ ավարտվեցին ոչ-ոքի արդյունքով: Մոսկվայի «Սպարտակի» հետ արարատցիների հանդիպումն ավարտվեց 1-1 հաշվով, իսկ «Սիմոնյանի բարեկամներ» թիմի հետ մրցավեճում մրցակիցները 4-ական գնդակ փոխանակեցին: «Արարատը» գրավեց 2-րդ տեղը, իսկ հաղթող դարձավ «Սիմոնյանի բարեկամներ» թիմը, որը «Սպարտակի» հետ խաղն ավարտել էր 3-3 հաշվով:

Մրցաշարի ավարտից հետո Նիկիտա Սիմոնյանը շնորհակալություն է հայտնել մասնակիցներին, մասնավորապես «Արարատի» վետերաններին:

Հակոբ Առաքելյանը պարտվեց օլիմպիական չեմպիոնին

Տյումենում ընթացող ձյուդոյի միջազգային մրցաշարում վիճարկվում են աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսները տղամարդկանց 100 կգ եւ 100 կգ-ից ավելի, կանանց՝ 78 կգ եւ 78 կգ-ից ավելի քաշային կարգերում: Մրցաշարին մասնակցում են 21 երկրների 40 ձյուդոյիստներ:

Հայաստանն այս մրցաշարում ներկայացրեց մինչեւ 20 տարեկանների Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր, 100 կգ քաշային Հակոբ Առաքելյանը: Վիճակահանությամբ 1/16 եզրափակիչում Առաքելյանին բաժին էր ընկել չափազանց ուժեղ մրցակից՝ 2004-ի օլիմպիական խաղերի չեմպիոն, ճապոնացի Կեյջի Սուզուկին: Ցավոք, հայ ձյուդոյիստին չհաջողվեց հաղթել մրցակցին ու դուրս մնաց հետագա պայքարից: Նշենք, որ աշխարհի բացարձակ չեմպիոնը պարգեւատրվելու էր 25 հազար դոլարով: Արծաթե եւ բրոնզե մեդալակիրները ստանալու էին համապատասխանաբար 15 եւ 10 հազարական դոլար:

Աբրահամը ռինգ դուրս կգա հունվարին

Արթուր Աբրահամը, որ մտադրվել է կրկին վերադառնալ առաջին միջին քաշային կարգ, իր հաջորդ մենամարտը կանցկացնի հունվարին: Նա առայժմ զբաղված է ասիձանաբար քաշը պակասեցնելու խնդրով: Հունվարին նա կմենամարտի մինչեւ 75 կգ քաշային կարգում: Առայժմ հայտնի չէ, թե ում հետ է մրցելու Աբրահամը, բայց նա մտադիր է ուժեղ մրցակցի հետ մենամարտելու: Աբրահամը խոստացել է, որ հաջորդ տարի կրկին նվաճելու է աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հեմատոմ

Առեւտրահաշվեկշիռը՝ բացասական, կյանքը... դրական

Հայաստանի տնտեսվարական ու տնտեսագիտական մտքի այն դրսեւորումը, թե երկրի առեւտրային հաշվեկշռի դրական արտահայտությունը, այն է՝ ներմուծման հանդեպ արտահանման գերազանցումը, հարկ է հիմնամոտակ դարձնել, հանրության որոշակի մասի մեջ ոգեւորություն չի առաջացնում: Նրանք, օրինակ, հարցնում են, թե էական ինչ փոփոխություններ են տեղի ունեցել տարիներ առաջվա 240 մլն դոլարի արտահանումը 720 մլն դոլարի հասցնելու առդյունքում: Խոսքը, ոչ ավել, ոչ պակաս, եռապատիկ աճի մասին է, որը պետք է որ արտացոլվեր ոչ թե հանրության այս կամ այն հատվածի կենցաղում, այլ ողջ երկրի առօրյայում: Վերջերս հրապարակված մի հարցմամբ պարզվել է, որ ՀՀ-ում սահմանված նվազագույն զամբյուղի չափորոշիչով աղքատ է դասվում բնակչության մոտ 46 տոկոսը: Եվ սա այն ցուցանիշների դեպքում, երբ, ըստ 2003 թվականին հաստատված «ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի», 2012-ին երկրի համախառն ներքին արդյունքը պետք է կազմեր 5,1 մլրդ ԱՄՆ դոլար, երբ արդեն ունենք 8 մլրդ դոլար: Թե որքեղ է հանելուկի պատասխանը՝ ՀՀ բարային հաղթահարին չգիտի. փոխարենը լավ գիտի, որ ծրագիրն ընդունելու պահում միջին որակի պանրի ու տեղական մսի 1 կգ-ը 800-900 դրամ էր, հիմա՝ այս թվերի եռապատիկը, տրանսպորտով հաղթային երթեւեկը 50 դրամ էր, հիմա 100 դրամ եւ այսպես շարունակ: ՀՆԱ-ի 60 տոկոս աճը բերել է կենդանական ու բուսական սննդատեսակների, ծառայությունների ու սպասարկումների այնպիսի աճի, ուր շեշտակի ասելն էլ համեստ կարելի է դիտարկել: Տպավորություն է ստեղծվում, որ մեզանում պետության հարստացումը չի նույնացվում երկրի հաղթահարման կյանքի ու առօրյայի բարելավման հետ, առաջինը, հանձին իր ինչ-որ հատվածի, իր համար է հարստանում, մյուս մասը՝ զգալի թե որոշակի, անորոշության է տրվել: Վերջինիս ինչ, թե կոնյակի ու գինու, ոսկերչության ու ադամանդագործության, տնտեսության մի քանի այլ ոլորտներում պետական հաղթականություն է իրականացվում, որի արդյունքում նպատակ է հռչակվում արտահանման ծավալների ավելացումը: Չէ՞ որ ոչ ուղղակի, ոչ անուղղակի ձեւով հանրության այդ գերակշիռ մասը դրանցից չի օգտվում: Պետության հարաբերական հարստությունից հիմնականում անմասն են մնում գյուղական ու փոքրաթիվ բնակչությամբ հաղթաքաղաքների բնակիչները, ուր անգամ ընդհանուր բնույթի սոցիալական հարցերի լուծումները չեն նպաստում մարդկանց մեջ նկատվող տրամադրությունների դրական փոփոխմանը:

Այսուհանդերձ. ինչքանով է հիմնավոր երկրի առեւտրային հաշվեկշռում դրական արդյունք ունենալու ուղղությամբ գործընթացների ծավալումը: Փորձենք որոշակի վիճակագրություն ներկայացնել գերհզոր ԱՄՆ-ի եւ համեստ տնտեսություն ունեցող Լիբանանի վերաբերյալ, որոնք վերցրել ենք ԱՄՆ-ում 1868 թվականից յուրաքանչյուր տարի տպագրվող «Համաշխարհային փաստեր» տեղեկագրից:

1000-էջանոց այս հրատարակության 85-րդ էջում տպագրված աղյուսակից տեղեկանում ենք, որ ԱՄՆ-ի ներմուծում-արտահանում ցուցանիշը 1790-1880 թվականներին բացասական է եղել, 3 մլն դոլարից մինչեւ 43 մլն դոլարի միջակայքում: Հետագա ուղիղ 1 դարի ընթացքում դրականի է վերածվել՝ 168 մլն դոլարից հասնելով 9 մլրդ դոլարի: Իրավիճակը կտրուկ փոխվել է 1980-ին Ռոնալդ Ռեյգանի նախագահ ընտրվելուց հետո, երբ հենց այդ տարում 240 մլրդ դոլար արտահանման դիմաց ներմուծումը կազմել է 245 մլրդ դոլար: Թող այն կարծիքը չստեղծվի, թե դա տեղի է ունեցել երբեմնի դերասանի աղաբնորհ կառավարման հետեւանքով, քանզի 5 տարի անց բացասական հաշվեկշիռն արդեն 132 մլրդ դոլար էր, Ռեյգանն էլ վերընտրված ու փառաբանվող նախագահ: Նույն պատկերն արձանագրվեց ավագ Բուշի, նրան հաջորդած Քլինթոնի, կրտսեր Բուշի ու ներկայիս նախագահ Օբամայի կառավարման շրջանում: 2008-ին, երբ վերջինն արդեն 1 տարի իշխանությունում էր, բացասական հաշվեկշիռն աստղաբաշխական թիվ է կազմել, հասել 816 մլրդ դոլարի: Այն տպավորությունն է ստեղծվում, թե Երկիր մոլորակի տնտեսության 20 տոկոսն ունեցող այս գերհզոր պետությունը հիմնավոր սեփական արտադրություն չունի, օգտվում է այլոց արտադրածից, լինի հագուստ թե ավտոմեքենա, կենցաղային տեխնիկա ու կահույք, հեռակապի միջոց ու խաղալիք: Երկիրը ներկրում է ումից եւ ինչ պատահի, ուր 2009-ին առաջին տեղում Չինաստանն էր, իր 227 մլրդ դոլար դրական հաշվեկշռով: Անգամ Աֆրիկայի հետ է առեւտրային հաշվեկշիռը բացասական, որը հիշատակված տարում կազմել է 38 մլրդ դոլար: Մեր տնտեսվարական մտքի կողմնորոշման համաձայն ԱՄՆ-ը պետք է որ երկրի ներսում խնդիրներ ունենար, որը հայաստանցիներս չենք նկատում այդ երկիր մեր աչքարհով մեկ սփռված հայրենակիցների ներգաղթի աճող ցուցանիշի պարագայում. գուցե նրանցից ոմանց սպասելիքները չեն արդարանում, բայց ԱՄՆ-ից անհատական ու պետական ֆինանսական օգնություններն էլ դեպի Հայաստան չեն դադարում: 1999-2009 թվականներին երկրի ՀՆԱ-ն 9 տրիլիոնից հասել է 14 տրիլիոն դոլարի, բյուջեն 1,6 տրիլիոնից 3,5 տրիլիոն դոլարի: ՀՆԱ-ի մոտ 50 տոկոս աճի պարագայում բյուջեն կրկնապատիկից ավելի է աճել՝ 1 բնակչի հաշվով հասնելով 11 հազար դոլարի: Մեր ներկա 1000 դոլարի հետ չփորձենք միջինացված ինչ-որ համեմատություն անել, քանզի այն տարբեր մոտեցումների դեպքում կարող է խիստ անցանկալի պատկերներ ուրվագծել: Թե ինչպես է ամերիկացի ու եվրոպացի կառավարիչներին հաջողվում իրենց տնտեսական ոլորտների պատասխանատուներից նման արդյունքներ ստանալ, իրոք անհասկանալի է, քանզի մեզանում, պարզվեց, բարդ խնդիր է անգամ 0,6 տոկոսով աճի աղպահովումը: Նման օգնության խնդրանքով կարելի է դիմել մեզ երբեմնի հայրենակից մեծքալության հանրապետություններին, ուր ՀՆԱ-բյուջե հարաբերակցությունը անցել է 30 տոկոսի ցուցանիշը: Բայց մեր մարդիկ առաջնահերթ ակնկալում են միջին կենսամակարդակ ապահովող աշխատատեղերի ստեղծումը, երբ մարդն իր աշխատանքով ի զորու կլինի լուծել իր առօրյա խնդիրները: Այս դեպքում է, որ հարյուրհազարավոր աշխատողներն ու նրանց գործատուները լիարժեք հարկատուներ են դառնում, նպաստում երկրի իրական կայացմանը:

Լիբանանի պարագայում տեղեկագիրքը համանման ընդգրկուն վիճակագրություն չի տալիս: Այսուհանդերձ տվող որոշ ֆինանսական թվերը հնարավորություն տալիս են կարծիք կազմելու այս երկրի մարդկանց կենցաղի մասին, որոնց թվում են մեր մոտ 100 հազար հայրենակիցները: 1999-ին երկրի ներմուծումը եղել է 5,7 մլրդ դոլար, արտահանումը՝ 870 մլն դոլար, 10 տարի անց թվերը 16,4 մլրդ եւ 3,5 մլրդ դոլար են. մոտ 5 անգամ բացասական առեւտրահաշվեկշիռը ՀՀ-ի թվերն է հիշեցնում, բայց չգիտես ինչու այդ երկրում տնտեսական վիճակն այն չէ, ինչ մեզանում: Այս ընթացքում Լիբանանի բյուջեն 7,9 մլրդ դոլարից հասել է 11,4 մլրդ դոլարի, 1 բնակչի հաշվով մոտ 3000 դոլար: Մի պահ ընդունենք որ ՀՀ տնտեսությունը 5 տարի անց կհասնի այս ցուցանիշին. արդյո՞ք մենք կարողանենք այն կենցաղը, որն այսօր առկա է մեր հարազատ երկրում: Դիտարկելով որոշ գործընթացներ, նման կարծիք կազմավորել չես կարողանում, որն ընդամենը լրագրողական մոտեցում է: Վերցնենք պարենային ապահովության ընդամենը 1 բաղադրիչ, հավի մսի արտադրությունը, որի սպառումն ինչ-որ բան որոշում է մարդկանց տրամադրություններում: 3,6 մլն բնակչության ժամանակ Լիբանանում պահել են 32 մլն հավ, ներկայիս 4,1 մլն բնակչության դեպքում՝ 37 մլն հավ, 1 բնակչի հաշվով տարեկան 10 հավ: Ըստ տեղեկատուի՝ ՀՀ-ում թվերը համապատասխանաբար 4,1 մլն եւ 3,8 մլն են, արդյունքում հավի մսի սպառման զգալի քանակը ապահովվում է ներկրման միջոցով, այլեւայլ գործոնների ազդեցությամբ դրանց գնի բարձրացման փաստարկումով: Բայց չէ՞ որ մեր հայրենի գյուղատնտեսությունը նախատեսում էր 2010 թվականին ունենալ 8 մլն հավ, անգամ այս թիվը չի կատարվել: Եթե արդարացումն այն է, որ մեզանում այս մսատեսակի արտադրության ինքնարժեքը բարձր է սացվում, դա անհասկանալի ու անընդունելի մոտեցում է: ՄԱԿ-ի պարենի ու գյուղատնտեսության կառույցի մի ուսումնասիրության համաձայն՝ 1 տոննա հավի մսի ինքնարժեքը Լիբանանում 1100 դոլար էր, ՀՀ-ում 1400 դոլար: Ինչո՞ւ, պարոնայք, այս պարզ գործընթացում անգամ արդյունավետություն չենք ապահովում, որն էլ ներմուծման է հանգեցնում, վաճառվում կգ-ը նվազագույնը 2 դոլարով, տոննան՝ 2000 դոլար, երբ տեղական հավը վաճառվում է կրկնակիից ավելիով: Ստացվում է որ աշխատանք ունեցող ՀՀ արտահանման ոլորտներից որեւէ մեկում ընդգրկված մեր քաղաքացին էլ ի զորու չէ պահանջվող քանակով տեղական արտադրության հավի մսից օգտվել: Եվ հարցը՝ ինչո՞ւ է ՀՀ-ում տնտեսական վիճակն անմխիթար, մարդկանց հիմնական մասի կենցաղն անբավարար, մնում է անպատասխան: Այստեղ երկրի առեւտրային դրական թե բացասական հաշվեկշիռը կարծես հիմնական մտահոգություն չէ, այն հարկավոր է այլ տեղում փնտրել:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ԳՊՀ - ԱՊՁԲ - 02/11

Պատվիրատու՝ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԳՊՀ), որը գտնվում է ք. Գորիս, Ավանգարդ 2 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել լաբորատոր սարքի մատակարարման գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ԳՊՀ կարիքների համար լաբորատոր սարքի ձեռքբերումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձիք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձիք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Պարզեցված ընթացակարգի հրավերը փաստաթղթային տեսքով ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված՝ 9-րդ օրը, ժամը 15:00-ն:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին՝ ք.Գորիս, Ավանգարդ 2 հասցեով: Պատվիրատուն պարտավորվում է թղթային ձևով հրավեր ստանալու պահանջ ներկայացնելու օրվա ընթացքում թղթային հրավերը տրամադրել հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին՝ ք.Գորիս, Ավանգարդ 2, թիվ 1 մասնաշենք, 1104 սենյակ հասցեով ոչ ուշ, քան պարզեցված ընթացակարգի հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 15:00-ը (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը), դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների, պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար Պատվիրատուին պետք է ներկայացվեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պայմանների համաձայն պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների բողոքարկման խորհուրդ (Գնումների աջակցման կենտրոն, հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ), «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ հինգ օրացուցային օրվա ընթացքում:

Գորիսի պետական համալսարան

ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետեւյալ թափուր աշխատատեղերի համար

ՎԱՐՉԱԿԱԶՄ

1/ Համալսարանական կրթության զարգացման եւ որակի ապահովման վարչություն- Մասնագետ

2/ Նորագույն տեխնոլոգիաների ներդրման եւ որակի գնահատման բաժին- Մասնագետ

3/ Գիտահետազոտական կենտրոն- Գիտաշխատող

4/ Հոգեբանության եւ սոցիալական մանկավարժության Ֆակուլտետ- Դեկանի օգնական

ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ

5/ Ընդհանուր մանկավարժության ամբիոն- Կաբինետի ավագ մասնագետ

6/ Կենսաբանության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն- Լաբորանտ

7/ Սոցիալ-տնտեսական աշխարհագրության եւ աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի ամբիոն- Մասնագետ

8/ Արտասահմանյան լեզուների եւ նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոն- Մասնագետ

9/ Իրավունքի պատմության, իրավագիտության եւ նրա դասավանդման մեթոդիկայի կաբինետ- Կաբինետի ավագ մասնագետ

10/ Զարգացման եւ կիրառական հոգեբանության ամբիոն- Մասնագետ

11/ Հոգեբանության կաբինետ- Կաբինետի ավագ մասնագետ

12/ Արվեստի պատմության տեսության եւ մշակութաբանության ամբիոն- Մասնագետ

13/ Տրամաբանության, տեսական եւ գործնական փիլիսոփայության, մշակութաբանության ամբիոն- Մասնագետ

Հավակնորդները ՀՊՄՀ- կադրերի բաժին են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը.

▼ Գրավոր դիմում՝ ուղղված ռեկտորին, նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է դիմող անձը.

▼ Ինքնակենսագրություն /CV տեսքով/

▼ Տվյալ աշխատատեղի համար պահանջվող կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները.

▼ Անձնագրի պատճեն.

▼ Աշխատանքային գրքույկի պատճեն.

▼ Հավակնորդը կարող է ներկայացնել նաեւ երաշխավորագիր-նամակ:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ մինչեւ նոյեմբերի 14-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել կադրերի բաժին.
հասցե՝
ք.Երեւան,Տիգրան Մեծի 17, 209 սենյակ
հեռ՝ 52-42-80

ՌԵԿՏՈՐԱՏ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝31.10.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տպագան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: